

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ ՊՅ

«ՇՈՒԿԱՅԱՎԱՐՄԱՆ ԴՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՖԵՐՄԵՐՆԵՐԻՆ» ԾՐԱԳԻՐ (ՇՀՖԾ)

«ԳՅՈՒՂԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ» ԲԱՂԱԴՐԻՉ

Պայմանագիր` /FMAP/CS/SSS-2013/001

Ազդեցության գնահատում «Շուկայավարման հնարավորությունն ֆերմերներին» ծրագրի

«Գյուղական ենթակառուցվածքներ» բաղադրիչի համար

«ՊԱՍՎ» հետազոտական-վերլուծական կենտրոն»
հասարակական կազմակերպություն (ՊԱՍՎ ՀՎԿ ՀԿ)

“Private agriculture, search and view” Research
Analytical Center” Non-Governmental Organization
(PASV RAC NGO)

Բովանդակություն

Հապավումներ.....	3
Ամփոփագիր	4
Ներածություն	7
«Շուկայավարման հնարավորություններն ֆերմերներին» ծրագիր.....	8
Գյուղական ենթակառուցվածքներ.....	9
ՇՀՖԾ «Գյուղական ենթակառուցվածքներ» բաղադրիչի ազդեցության գնահատման հետազոտություն	11
Հետազոտության արդյունքները	13
Ոռոգում.....	14
Դրենաժային ծրագրեր.....	16
Խմելու ջրամատակարարում.....	17
Գազիֆիկացում	19
Ծանապարհաշինարարություն.....	21
Արդյունքների ամփոփում ըստ չափանիշների	22
Ակտուալության գնահատում.....	24
Էֆեկտիվության գնահատում (Effectiveness).....	25
Արդյունավետության գնահատում (efficiency).....	27
Կայունության գնահատում	28
Հավելվածներ.....	31

Հապավումներ

ԳՖԿ ԾԻԳ	«Գյուղական ֆինանսավորման կառույց» ծրագրի իրականացման գրասենյակ
ՇՀՖԾ	Շուկայավարման հնարավորությունն ֆերմերներին ծրագիր
ՀՀ ԱՎԾ	ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն
ԳՏ	Գյուղացիական տնտեսություն
ՊԱՍՎ ՀԿԿ ՀԿ	«ՊԱՍՎ» հետազոտական-վերլուծական կենտրոն» հասարակական կազմակերպություն
ԳԶՄՀ	Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ
ՕԴԻԴ	ՕԴԵԿ-ը միջազգային զարգացման համար
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ԳՎՏԶԾ	Գյուղական վայրերի տնտեսական զարգացման ծրագիր
ԱԶ	Անհատ ձեռնարկատեր
ՓՄԶ	Փոքր և միջին ձեռնարկություն
ԳՖԿ	Գյուղական ֆինանսական կառույց

Ամփոփագիր

- i) ՇՀՖԾ իրականացումը համընկել է երկրում սոցիալ-տնտեսական անկման և աղքատության ավելացման հետ, ինչը իր ազդեցությունն է ունեցել ծրագրի հաջող իրականացման տեսանկյունից:
- ii) ՇՀՖԾ «Գյուղական ենթակառուցվածքներ» բաղադրիչի պոտենցիալ շահառուների ընդգրկման աստիճանը կազմել է 65.5 %: ՇՀՖԾ «Գյուղական ենթակառուցվածքներ» բաղադրիչի ծրագրի սպասվելիք արդյունքային ցուցանիշները հիմնականում կատարվել են խմելու ջրամատակարարման, ճանապարհաշինարարության և դրենաժային ենթածրագրերի համար: Այս տեսանկյունից խնդիրներ ունեն գազիֆիկացիայի և ոռոգման ենթածրագրերը:
- iii) Գնահատման հետազոտությունն իրականացվեց ընտրամրային մեթոդով: ՇՀՖԾ գործունեության հանրապետության բոլոր 10 մարզերից ընտրվեցին 8 մարզեր, այնպես, որպեսզի ներառվեն հանրապետության հիմնական բոլոր՝ լեռնային, նախալեռնային և հարթավայրային գոտիները:
- iv) Հետազոտությամբ ընդգրկվել են 16 գյուղական համայնքներ, որոնց ընտրությունը կատարվել է հաշվի առնելով ՇՀՖԾ ծրագրի իրականացման աշխարհագրությունը և ՇՀՖԾ ենթակառուցվածքների բաղադրիչի գնահատման Լիազորությունների շրջանակի պահանջները: Արդյունքում, ըստ ենթաոլորտների հետազոտությամբ ընտրվել են. գազիֆիկացում՝ 6 համայնք, խմելու ջրամատակարարում՝ 5 համայնք, ոռոգում՝ 4 համայնք և ճանապարհաշինարարություն՝ 1 համայնք:
- v) Ենթակառուցվածքներ բաղադրիչի գործունեության ազդեցության գնահատման համար, համայնքների ստուգիչ խումբը ձևավորվել է Գյուղական ֆինանսավորման բաղադրիչի ազդեցության գնահատման համար ընտրված համայնքներից:
- vi) Հետազոտությունն իրականացվել է 2 հարցաթերթերի մջոցով: Դաշտային աշխատանքներն սկսվել են 2013թ. նոյեմբերի 1-ից և ավարտվել նոյեմբերի 20-ին: Հարցումներն, ըստ համապատասխան հարցաթերթերի, իրականացվել են անմիջապես տնտեսություն այցելելու միջոցով:
- vii) Համայնքների ղեկավարների հարցման տվյալներով, ՇՀՖԾ «Գյուղական ենթակառուցվածքներ» բաղադրիչի շահառու համայնքներում, վերջին 4-5 տարիների ընթացքում բնակչության թվի նվազումը հանրապետական միջին տվյալների հետ համեմատած գտնվում է նույն մակարդակի վրա: Էական տարբերություններ չեն արձանագրվել նաև աշխատանքային միգրացիայի տվյալներում:
- viii) 2013թ. տվյալներով, համեմատած մինչծրագրային տվյալների հետ, ոռոգման շահառու 12 համայնքներում ցանքատարածություններն ավելացել են 624 հա-ով կամ 13.9 %: Այն դեպքում, երբ հանրապետության ցանքատարածությունների ավելացումը կազմել է ընդամենը 0.1 տոկոս¹:
- ix) Ոռոգման հասանելիության մակարդակի բարձրացումը նպաստել է ցանքատարածությունների կառուցվածքային դրական տեղաշարժերին: Մասնավորապես, ֆերմերները, հացահատիկային ցածրարժեք մշակաբույսերի տարածքները փոխարինել են ավելի բարձրարժեք պտղի և խաղողի այգիներով:
- x) Հաշվի առնելով բուսաբուծության ճյուղի մասնագիտացման ուղղությունները, ոռոգման համար կատարվող ներդրումների արդյունավետության համար ֆինանսական վերլուծություններ կատարվեցին 2 մոդելների համար. 1. հարթավայրային, որում միավորվեցին Արարատի և Արմավիրի մարզերը և 2. նախալեռնային՝ Վայոց Ձորի մարզը:
- xi) Ոռոգման ենթածրագրերով ոռոգելի տարածքների և շահառուների պլանավորված ցուցանիշները փաստացի կատարվել են համապատասխանաբար՝ 68.5 և 92.9 տոկոսով:
- xii) Ընդհանուր առմամբ ոռոգման ծրագրերի իրականացումը գնահատվում է չափավոր բավարար:

¹ Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, ՀՀ ԱՎԾ, 2008-2012

- xiii) ՇՀՖԾ կողմից իրականացված դրենաժային ծրագրերի հիմնական առանձնահատկությունն այն է, որ այդ ծրագրերի արդյունավետ գործունեության ժամանակը կարճ է՝ 2-3 տարի, որից հետո նոր ներդրում կատարելու անհրաժեշտություն է առաջանում:
- xiv) Դրենաժային ծրագրերի շնորհիվ 7 համայնքներում վերջին 3-4 տարիներին ապահովագրվել են թվով 125 առանձնատներ, իրենց օժանդակ կառույցներով, 320 հա գյուղատնտեսական ցանքատարածություններ, ներառյալ տնամերձները:
- xv) Դրենաժային ծրագրերի շնորհիվ չկայացած կորուստները կազմել են ավելի քան 2.4 մլն ԱՄՆ դոլար, որը 7.5 անգամ գերազանցում է այդ ծրագրերի վրա կատարված ընդհանուր ծախսերի գումարը:
- xvi) Դրենաժային ծրագրերի արդյունավետության նման բարձր մակարդակը լիովին հիմնավորում է պարբերաբար՝ 3-4 տարին մեկ անգամ այդ ծրագրերի կրկնման անհրաժեշտությունը:
- xvii) Ընդհանուր առմամբ դրենաժային ծրագրերի իրականացումը կարելի է հաջողակ համարել և գնահատել բավարար:
- xviii) 2008-2010 թթ. հանրապետության 8 մարզերի 25 գյուղական համայնքներում ՇՀՖԾ շրջանակներում իրականացվել են խմելու ջրամատակարարման համակարգերի բարելավման ծրագրեր:
- xix) Հարցման պահին ընդամենը ընտրանքային համակցության (111 տնտեսություն) 92 %-ի խմելու ջրի հիմնական աղբուրը ծորակն է կացարանում կամ բակում, որը նույնն է ինչ որ կար մինչև ծրագրերի իրականացումը՝ 2009թ.: Խմելու ջրամատակարարման շահառու համայնքներում, կացարանում կամ բակում խմելու ջրի աղբյուր ունեն հարցվածների 87.5 %-ը, որը նույնպես նույն մակարդակի վրա է մնացել:
- xx) Հարցման տվյալներով, դիտարկվող ժամանակահատվածում ընդամենը ընտրանքային համակցության համայնքներում ամեն օր ջուր ստացողների տեսակարար կշիռն ավելացել է 8.1%-ով, որից շահառու համայնքներում՝ 15 %-ով, իսկ կոնտրոլ խմբում՝ 6.6 %-ով:
- xxi) Ընտրանքային համակցությունում, 2009թ. 2013թ. համեմատությամբ, օրվա ընթացքում ջրի մատակարարման միջին տևողությունն ավելացել է 0.6 ժամով (11.4-12.0 ժամ), այդ թվում կոնտրոլ խմբում՝ 0.5 ժամով (11.7-12.2 ժամ), իսկ շահառուների խմբում՝ 0.7 ժամով (10.1-10.8 ժամ):
- xxii) Ջրամատակարարումը զգալիորեն բարելավում է կանանց կյանքը, քանի որ տան և անասունների ջուրը կանայք բերում են ձեռքով:
- xxiii) Ընդհանուր առմամբ խմելու ջրամատակարարման ծրագրերի իրականացումը կարելի է հաջողակ համարել և գնահատել բավարար:
- xxiv) Գազիֆիկացիան, ի տարբերություն մյուս ենթակառուցվածքների աչքի է ընկել էֆեկտիվության ցածր մակարդակով: 2013թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ գազի մայր գծերին պոտենցիալ շահառուների միացման աստիճանը կազմում է 34.6 %:
- xxv) Գազի գծին միացած տնտեսություններում օգտագործվող վառելիքի կառուցվածքի փոփոխությունները ցույց են տալիս, որ գազը դանդաղորեն դուրս է մղում մյուս վառելիքներին:
- xxvi) Բնակարանը փայտով ջեռուցող տնտեսություններում, ձմռան ընթացքում միջին հաշվով ջեռուցվում է բնակարանի 61.7 քառ. մետր տարածքը, աթարով ջեռուցողների մոտ այն կազմում է 61.9 քառ. մետր, այն դեպքում, երբ գազով ջեռուցողների մոտ ջեռուցվող տարածքը հասնում է 88.8 քառ. մետրի:
- xxvii) Ձմռան ընթացքում բնակարանի ջեռուցման ծախսը 2013թ., ընդամենը ընտրանքային համակցության միջին 1 տնտեսության հաշվով կազմել է 197.7 հազ. դրամ:
- xxviii) Ձմռան ամիսներին բնակարանը փայտով ջեռուցող տնտեսությունների բնակարանի ջեռուցման 1 քառ. մետրի վրա փայտի միջին ծախսը կազմում է 2219 դրամ, աթարով ջեռուցվող տնտեսություններում աթարի ծախսը կազմում է 1798 դրամ/ք.մ և գազով ջեռուցվող տնտեսություններում գազի ծախսը կազմում է 1861 դրամ/ք.մ: Այսինքն, եթե հաշվի առնենք այն փաստը, որ աթարի համար հունք հանդիսացող գոմաղբը միաժամանակ արժեքավոր

պարարտանյութ է, ապա պարզ է դառնում, որ բնակարանի ջեռուցման ամենաէժեքան վառելիքը գազն է:

- xxix) Հարցված բոլոր տնտեսություններում գազի բաժինը վերանշակման համար ավելացել է 1.7 %-ով, իսկ ՇՀՖԾ գազաֆիկացման շահառու համայնքների տնտեսություններում այն կազմել է 8.8 %:
- xxx) ՇՀՖԾ գազիֆիկացիայի ծրագրերի արդյունքում միջին 1 տնտեսության հաշվով տարեկան 9 հազ. դրամով պակասել է ջեռուցման համար փայտի օգտագործումը: Ներկա դրությամբ բոլոր փաստացի շահառուների հաշվով այդ գումարը կկազմի ավելի քան 63 մլն. դրամ կամ 155,5 հազ. ԱՄՆ դոլար: Փաստացի խնայվել է 3500 խոր. մետր (63/18.000 դրամ) փայտ, որը համարժեք է 7000 ծառի
- xxxii) Գազիֆիկացիայի ծրագրերի էֆեկտիվությունը չափավոր բավարար է:
- xxxiii) Ակտուալությունը: ՇՀՖԾ նպատակներն, ընդհանուր առմամբ համապատասխանում էին Հայաստանի Հանրապետության զարգացման առաջնահերթություններին՝ գյուղատնտեսության և գյուղական վայրերի զարգացման միջոցով հասնել երկրում գյուղական աղքատության կայուն կրճատմանը: Ծրագրի նպատակները համահունչ են ՀՀ գյուղատնտեսության 2010-2020 թթ. կայուն զարգացման ռազմավարության և ՀՀ-ում աղքատության կրճատման 2006թ. ռազմավարության նպատակներին, ինչպես նաև ԳԶՄՀ՝ երկրում գործունեության նպատակներին: Ընդհանուր առմամբ, ՇՀՖԾ «Գյուղական ենթակառուցվածքներ» բաղադրիչի ակտուալության ռեյտինգը բավարար է:
- xxxiv) Էֆեկտիվությունը: Դրված նպատակների իրականացման և սպասվելիք արդյունքներին հասնելու տեսանկյունից Գյուղական ենթակառուցվածքներ բաղադրիչի իրականացումը ընդհանուր առմամբ էֆեկտիվ էր: Ընդհանուր առմամբ ենթակառուցվածքների բոլոր տեսակներով (բացի գազիֆիկացիայի ծրագրերից) դրված նպատակները իրականացվել են և ստացված արդյունքներն ընդհանուր առմամբ համապատասխանում են ծրագրային սպասվելիք արդյունքներին: ՇՀՖԾ «Գյուղական ենթակառուցվածքներ» բաղադրիչի էֆեկտիվության ռեյտինգը չափավոր բավարար է (4):
- xxxv) Արդյունավետությունը: ՇՀՖԾ «Գյուղական ենթակառուցվածքներ» բաղադրիչի արդյունավետության ռեյտինգը չափավոր բավարար է (4):
- xxxvi) Կայունությունը: Ենթակառուցվածքների ծրագրերի կայունության ռեյտինգը չափավոր բավարար է (4):
- xxxvii) ՇՀՖԾ «Գյուղական ենթակառուցվածքներ» բաղադրիչի իրականացումը ԳԶՄՀ Սոնիտորինգի և գնահատման ուղեցույցով սահմանված 6 բալանի համակարգով գնահատվում է Չափավոր Բավարար (4):

Ներածություն

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը, որը սկսվեց 2008թ. վերջին, լրջորեն հարվածեց նաև Հայաստանի տնտեսությանը: Երկրի համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) 2008թ., ի տարբերություն 2000-ական թվականների տարեկան միջին երկնիչ աճի, նվազեց և կազմեց 6.9 %: 2009թ. արձանագրվեց Հայաստանի տնտեսության խոր անկում՝ 14.1%: Որպես հետևանք, նույն տարում աղքատության մակարդակն 1998թ. հետո, առաջին անգամ աճեց: 2010թ. Հայաստանի տնտեսությունը փոքր աճ ապահովեց՝ 2.2 %, որը սակայն չկասեցրեց աղքատության ավելացման միտումները: Միայն 2011թ., երբ տնտեսության աճը կազմեց 4.7 %, աղքատության մակարդակի աճը հնարավոր եղավ կասեցնել: 2012թ., երբ տնտեսության աճը կազմեց 7.2 % սկսվեց աղքատության մակարդակի դանդաղ իջեցում:

2012թ. հանրապետության բնակչության ամեն երրորդը՝ 32.4%, աղքատ է եղել: Նրանց 13.5%-ը եղել են շատ աղքատ, իսկ 2.8%-ը՝ ծայրահեղ աղքատ: Չնայած նրան, որ 2012թ. աղքատության մակարդակը 2011թ. համեմատությամբ նվազել է, սակայն 2008թ. համեմատությամբ թե աղքատության մակարդակով, թե դրա խորությամբ ու սրությամբ դեռևս զգալիորեն զիջում է:

Աղքատության մակարդակի 2008 և 2012 թթ. հիմնական ցուցանիշները մարզերի կտրվածքով բերված է Հավելված 1-ում:

Սոցիալ-տնտեսական նման պայմաններում, նույն 2008 թ. մայիս ամսին, Հայաստանում մեկնարկեց «Շուկայավարման հնարավորությունն ֆերմերներին» ծրագիրը (ՇՀՖԾ), որը հանդիսանալով Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (ԳԶՄՀ) նախորդ՝ Գյուղական վայրերի տնտեսական զարգացման ծրագրի (ԳՎՏԶԾ-RAEDP) տրամաբանական շարունակությունը, նպատակուղղված էր հանրապետության գյուղական վայրերում աղքատության կրճատմանը:

Սույն հաշվետվությունը պատրաստվել է ՇՀՖԾ ավարտական գնահատման նպատակով իրականացված ուսումնասիրության արդյունքներով:

«Շուկայավարման հնարավորությունն ֆերմերներին» ծրագիր

«Շուկայավարման հնարավորությունն ֆերմերներին» ծրագիրը (ՇՀՖԾ), որն իր գործունեությունը Չայաստանում սկսել է 2008թ. մայիս ամսին և ավարտվել 2013թ. հունիսին, ֆինանսավորվել է Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD), ՕՊԵԿ-ը միջազգային զարգացման համար (OFID), Դանիայի կառավարության, ՀՀ կառավարության, ֆինանսական հաստատությունների և ծրագրի շահառուների միջոցներով: Ֆինանսավորման ընդհանուր գումարը կազմում է ավելի քան 36 միլիոն ԱՄՆ դոլար:

ՇՀՖԾ հիմնական նպատակն է բարելավել Չայաստանի գյուղական բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը, որին հասնելու համար նախատեսվում էր. ա) աջակցել համեմատական տնտեսական առավելություններ ունեցող առաջնային արտադրողներին և առավել բարենպաստ աշխատանքային հնարավորություններ փնտրող գյուղաբնակների հետ սերտ կապ ունեցող ձեռնարկություններին, բ) տրամադրել ներդրումային գործիքներ և հարակից միջոցներ, որոնք կբավարարեն գյուղական բաժնետիրական ֆինանսավորման պահանջարկը, գ) աջակցել Չայաստանում ֆինանսական ոլորտի հետագա զարգացմանը՝ փոքր և միջին վարկերի պահանջարկը բավարարելու համար, դ) սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների վիճակի բարելավմամբ օժանդակել աղքատության կայուն նվազեցմանը:

Ծրագիրը, որի գործունեությունը ընդգրկել է հանրապետության ամբողջ տարածքը, ունեցել է հետևյալ 3 բաղադրիչները.

1. Գյուղական ֆինանսավորում – 14 640,0 հազ. ԱՄՆ դոլար՝ 40.3 % ընդհանուր ծրագրում,
2. Գյուղական ենթակառուցվածքներ – 18 672,5 հազ. ԱՄՆ դոլար՝ 51.4 % ընդհանուր ծրագրում,
3. Ծրագրի կազմակերպում և իրականացում – 2 999,9 հազ. ԱՄՆ դոլար՝ 8.3 % ընդհանուր ծրագրում:

Գյուղական ֆինանսավորման բաղադրիչը բաղկացած է 3 ենթաբաղադրիչներից.

- 1.1. Գյուղական բաժնետիրական հիմնադրամ,
- 1.2. Ներդրումային վարկեր փոքր և միջին ձեռնարկություններին (ՓՄՁ),
- 1.3. Ֆերմերային տնտեսությունների զարգացման վարկեր:

ՇՀՖԾ թիրախային խմբերն են հանդիսանում ֆերմերային տնտեսությունները, գյուղական հողագուրկները, գործազուրկները, թերզբաղվածները, ինքնազբաղվածները և գյուղական աղքատ կանայք:

Ծրագրի նպատակների իրականացման համար ԳԶՄՀ աջակցությամբ ավելի վաղ գործող «Գյուղական վայրերի տնտեսական զարգացման ծրագրի» (ԳՎՏԶԾ) ընթացքում ստեղծված Գյուղական ֆինանսավորման կառույցը (ԳՖԿ) իրականացնում է «Գյուղական ֆինանսավորում» բաղադրիչի ներդրումային վարկեր ՓՄՁ-ներին և ֆերմերային տնտեսությունների զարգացման վարկեր ենթաբաղադրիչները՝ ՇՀՖԾ կողմից տրամադրված ֆինանսավորման միջոցով վերաֆինանսավորելով մասնակից ֆինանսական հաստատությունների վարկերը:

Գյուղական ենթակառուցվածքներ


1. ՇՀՖԾ «Գյուղական ենթակառուցվածքներ» բաղադրիչի պոտենցիալ շահառուների ընդգրկման աստիճանը կազմել է 65.5 %: Խմելու ջրամատակարարման, ճանապարհաշինարարության և դրենաժային ենթածրագրերի շահառուների սպասվելիք արդյունքային ցուցանիշներն ամբողջովին կատարվել են: Ոռոգման ենթածրագրերի շահառուների պլանավորված ցուցանիշը կատարվել է 92.9 %-ով, իսկ ոռոգմամբ ծածկված տարածքի ցուցանիշը՝ 68.5 տոկոսով: Այս տեսանկյունից վիճակը վատ է նաև գազիֆիկացիայի ոլորտում, որտեղ շահառուների թիվը, պայմանավորված մի շարք հանգամանքներով (որոնց կանդրադառնանք հետագայում) զգալիորեն զիջում է սպասվելիք ցուցանիշին (34.6%):

Աղյուսակ 1. «Գյուղական ենթակառուցվածքներ» բաղադրիչի արդյունքային (output) ինդիկատորներ

ՇՀՖԾ ենթակառուցվածքների արդյունքային (output) ինդիկատորներ	Չափի միավոր	Պոտենցիալ շահառուների թիվը	Փաստացի 2013թ. հոկտեմբերի տվյալներով	%
ՇՀՖԾ շահառու համայնքների թիվը	համայնք	115		
Ծառայություն ստացող տնտեսությունների թիվը	տնտեսություն	40622	26592	65.5
Գազիֆիկացիայի համայնքներ	համայնք	68		
Գազ ստացող տնտեսությունների թիվը	տնտեսություն	20763	7183	34.6
Ոռոգման շահառու համայնքներ	համայնք	12		
Ոռոգման տարածքը	հա	2086	1429	68.5
Ոռոգման շահառու տնտեսությունների թիվը	տնտեսություն	6344	5894	92.9
Խմելու ջրամատակարարման շահառու համայնքներ	համայնք	26		
Խմելու ջրամատակարարման շահառու տնտեսությունների թիվը	տնտեսություն	9850	9850	100.0
Ճանապարհաշինարարության շահառու համայնքներ	համայնք	2		
Ճանապարհաշինարարության շահառու տնտեսությունների թիվը	տնտեսություն	3200	3200	100.0
Դրենաժի շահառու համայնքներ	համայնք	7		
Դրենաժի շահառու տնտեսությունների թիվը	տնտեսություն	465	465	100.0

Աղբյուրը՝ ԳՏՏԶ ԾԻԳ-ի և համայնքների ղեկավարների հեռախոսայի հարցման տվյալներով


2. ՇՀՖԾ ծրագրային դրույթներում չկան և չէին կարող լինել միջոցների ծախսման ոլորտային



Աղբյուր՝ ՇՀՖԾ

սահմանափակումներ: Մյուս կողմից, գյուղական ենթակառուցվածքներ բաղադրիչի ներդրումների մոտ 3/4-ը (Նկար 1) կազմել են գազիֆիկացման ծրագրերը: Սա ասվում է այն նկատառումով, որ հարցումներով ընդգրկված շահառու 16 համայնքներից 7-ի ղեկավարները, չնայած նրան, որ ժամանակին հայտ են ներկայացրել գազիֆիկացման ծրագրին միանալու համար, հարցազրույցի ժամանակ գազիֆիկացիան չեն համարել ծրագրի մեկնարկի դրությամբ իրենց համայնքի առաջնահերթությունը:

Մարզերի կտրվածքով միջոցների բաշխումը համեմատաբար ավելի հավասարաչափ է կատարվել (Նկար 2): Թերևս բացառություն է կազմում Շիրակի մարզը, որի դեպքում, մյուս մարզերի համեմատությամբ ավելի ծախսված միջոցները հիմնավորված կարելի է համարել, քանի որ մարզը համարվում է հանրապետության ամենադժբախտներից մեկը:



ՇՐՖԾ «Գյուղական ենթակառուցվածքներ» բաղադրիչի ազդեցության գնահատման հետազոտություն

Մեթոդը

3. Ի տարբերություն Հայաստանում իրականացված նախորդ ծրագրերի, երբ ԳՁՄՅ-ն ծրագրի ազդեցության գնահատման համար իրականացնում էր հիմնարար (Baseline), միջանկյալ (Repeat) և ավարտական (Complete) հետազոտություններ, ՇՐՖԾ-ի համար այս մոտեցումը չի պահպանվել: Ծրագրի իրականացման ընթացքի գնահատումն այս դեպքում իրականացվել է ՇՐՖԾ կողմից իրականացվող մոնիտորինգային այցելությունների և ԳՁՄՅ պարբերաբար իրականացվող առաքելությունների ընթացքում: Արդյունքում, ծրագրի իրականացման տարածքի վերաբերյալ մեկնարկային տեղեկատվության բացակայությունը, որոշակի դժվարություններ առաջացրեց ծրագրի ավարտական գնահատման համար:

4. Մեկնարկային և միջանկյալ տեղեկատվության պակասը լրացնելու նպատակով հետազոտության իրականացման մեթոդաբանությունում, համաձայն ԳՁՄՅ Ծրագրի ավարտական գնահատման ուղեցույցի², կիրառվեց տվյալների հավաքագրման «մինչև ծրագիրը և հետո», հիշողության օգտագործման, կոնտրաֆակտ վերլուծության մեթոդները: Նույն նպատակով կիրառվեցին նաև առկա երկրորդային տեղեկատվության հավաքագրման (ԱՎԾ, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, մարզպետարաններ, գյուղական համայնքներ և այլ), հետազոտության քանակական և որակական մեթոդները: Որպես տվյալների հավաքագրման հիմնական մեթոդ, կիրառվեց անմիջապես տնտեսություն այցելելու ուղղակի դիտարկման մեթոդը, իսկ առանձին դեպքերում՝ նաև հեռախոսային հարցումների մեթոդը:

5. Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ հիշողության օգտագործման մեթոդի կիրառման արդյունքում, հետազոտության տվյալների բազայի որակական առումով որոշ կորուստներ ունեցանք: Հարցազրույցի ժամանակ, ֆերմերների մի մասը (ըստ հարցազրուցավարների գնահատականի՝ 10-15 %-ը) չկարողանալով վերհիշել մինչև ծրագիրը (2009թ.) իրենց տնտեսության տվյալները կրկնում էին ընթացիկ տարվա տվյալները:

6. Հետազոտությունն իրականացվեց ընտրանքային մեթոդով: ՇՐՖԾ գործունեության հանրապետության բոլոր 10 մարզերից ընտրվեցին հետևյալ 8 մարզերը. Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի և Վայոց ձորի: Ընտրանքը կատարվել է այն հաշվով, որպեսզի ներառվեն հանրապետության հիմնական բոլոր՝ լեռնային, նախալեռնային և հարթավայրային գոտիները:

7. Գլխավոր և ընտրանքային համակցությունները: 2008-2013թթ. ՇՐՖԾ շրջանակներում հանրապետության բոլոր մարզերի 115 համայնքներում իրականացվել են արտադրական և սոցիալական նոր ենթակառուցվածքների կառուցման և հների վերականգնման ու վերանորոգման ենթածրագրեր, որոնցից.

- գազիֆիկացում – 68 համայնք,
- խմելու ջրամատակարարում – 26 համայնք,
- ոռոգում – 12 համայնք,
- դրենաժ³ - 7 համայնք,
- ճանապարհաշինարարություն – 2 համայնք:

8. Հետազոտությամբ ընդգրկվել են 16 գյուղական համայնքներ⁴ (Հավելված 2), որոնց ընտրությունը կատարվել է հաշվի առնելով ՇՐՖԾ ծրագրի իրականացման աշխարհագրությունը

² Guidelines for Project Completion, 2006, IFAD, Programm Management Department

³ - դրենաժի ենթածրագրերի ազդեցության գնահատման հարցումը կատարվել է շահառու համայնքների ղեկավարների մակարդակով, որոնք հարցվել են հեռախոսի միջոցով:

և ՇՀՖԾ ենթակառուցվածքների բաղադրիչի գնահատման Լիազորությունների շրջանակի պահանջները (Հավելված 3): Արդյունքում, ըստ ենթաուղղորտների հետազոտությամբ ընտրվել են հետևյալ թվով համայնքներ.

- գազիֆիկացում – 6 համայնք,
- խմելու ջրամատակարարում – 5 համայնք,
- ոռոգում – 4 համայնք,
- ճանապարհաշինարարություն – 1 համայնք:

Բացի այդ, ոռոգման ենթածրագրի 12 համայնքներից 11-ի վերաբերյալ (բացի Արտաշատ քաղաքից⁵), մարզային վիճակագրական մարմիններից հավաքագրվեց տեղեկատվություն ցանքատարածությունների վերաբերյալ, իսկ դրենաժի ենթածրագրի շահառու բոլոր 7 համայնքների ղեկավարների հետ անցկացվեցին հեռախոսային հարցազրույցներ նախորդ պատրաստված հարցաթերթի միջոցով:

Ենթակառուցվածքներ բաղադրիչի գործունեության ազդեցության գնահատման համար, համայնքների ստուգիչ խումբը ձևավորվել է Գյուղական ֆինանսավորման բաղադրիչի ազդեցության գնահատման համար ընտրված համայնքներից.

Արարատի մարզ-Գեղանիստ, Մրգանուշ, Այգեգարդ, Դալար,
Արմավիրի մարզ-Արաքս, Ջրառատ, Ջրաշեն,
Գեղարքունիքի մարզ-Լճավան, Ակունք,
Կոտայքի մարզ-Նոր Գեղի, Մայակովսկի, Գառնի,
Շիրակի մարզ-Հովտաշեն,
Վայոց Ձորի մարզ-Արենի

9. Հարցաթերթեր: Հետազոտությունը իրականացվել է 2 հարցաթերթերի միջոցով.

- a. Համայնքի ղեկավարի հարցաթերթ,
- b. Գյուղացիական տնտեսության հարցաթերթ:

10. Դաշտային աշխատանքներ: Դաշտային աշխատանքներն սկսվել են 2013թ. նոյեմբերի 1-ից և ավարտվել նոյեմբերի 20-ին: Հարցումներն, ըստ համապատասխան հարցաթերթերի, իրականացվել են անմիջապես տնտեսություն այցելելու միջոցով: Համայնքների հարցումներին մասնակցել են համայնքի ղեկավարները կամ այլ պատասխանատու անձիք, իսկ գյուղացիական տնտեսություններում՝ տնտեսության գլխավորը կամ տնտեսության այն չափահաս անդամը՝ ով մասնակցում է տնտեսության մակարդակով որոշումների ընդունմանը:

⁴ -Ճամբարակի համայնքում իրականացվել են և գազիֆիկացիայի և ճանապարհաշինարարական ծրագրեր:

⁵ - Արտաշատ համայնքի տվյալները արժանահավատության տեսանկյունից կասկածներ էին հարուցում:

Հետազոտության արդյունքները


Գյուղական ենթակառուցվածքներ

11. ՇՀՖԾ «Գյուղական ենթակառուցվածքներ» բաղադրիչի շրջանակներում, 2009-2013թթ. հանրապետության բոլոր մարզերի թվով 115 համայնքներում իրականացվել են տարբեր ենթակառուցվածքների կառուցման կամ բարելավման աշխատանքներ: Այս ոլորտում ՇՀՖԾ գործունեության ազդեցության գնահատման նպատակով իրականացված ընտրանքային հետազոտությամբ ընդգրկվել են 16 համայնքներ, որոնցում համայնքների ղեկավարներից բացի հարցման են ենթարկվել ընդհանուր առմամբ 111 ֆերմերային տնտեսություններ:

Աղյուսակ 2. Շահառու համայնքներն ըստ ենթակառուցվածքների

	Ներդրման չափը	ՇՀՖԾ շահառու համայնքներ	Ընդգրկվել են հարցումներով	Ընտրանքի չափը	
		USD	համայնք	համայնք	%
1	Գազիֆիկացում	10 654 531	68	6	8.8
2	Խմելու ջրամատակարարում	1 138 499	26	5	19.2
3	Ոռոգում	1 809 726	12	4	30.8
4	Դրենաժ	320 250	7	Համայնքների ղեկավարների հեռախոսային հարցում	
5	Ճանապարհաշինարարություն	594 818	2	1	50.0
	Ընդամենը	14 517 824	115	16	13.9

12. Համայնքների ղեկավարների հարցման տվյալներով, ՇՀՖԾ «Գյուղական ենթակառուցվածքներ» բաղադրիչի շահառու համայնքներում, վերջին 4-5 տարիների ընթացքում բնակչության թվի նվազումը հանրապետական միջին տվյալների հետ համեմատած գտնվում է նույն մակարդակի վրա: Էական տարբերություններ չեն արձանագրվել նաև աշխատանքային միգրացիայի տվյալներում:



Միակ դրական երևույթը, աշխատանքային միգրացիայի աննշան կրճատումն է ոռոգման շահառու համայնքներում: ՇՀՖԾ ոռոգման ենթածրագրերի արդյունքում ստեղծված նոր աշխատատեղերի շնորհիվ ոռոգման շահառու համայնքներում հաջողվել է կրճատել աշխատանքային միգրացիան:

13. Շահառու համայնքների տնտեսությունները տարեկան կանխիկ եկամտի ավելացման մակարդակով զիջում են կոնտրոլ խմբի տնտեսություններին (Աղյուսակ 3): Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ ՇՀՖԾ շահառուներ են դառնում համեմատաբար աղքատ համայնքները և այդ համայնքներում որևէ ենթակառուցվածքի բարելավումը չէր կարող իրավիճակի կտրուկ փոփոխություն առաջացնել:

Աղյուսակ 3. 1 ՏՏ միջին կանխիկ եկամտի փոփոխությունն ըստ ենթակառուցվածքների շահառու համայնքների

		ԳՏ-ների թիվը	2009թ.	2013թ.	2013թ. +,- 2009թ. նկատմամբ
			կանխիկ եկամուտը 1 գտ հաշվով, մլն.դրամ		
1	Ընդամենը հարցում	111	3.94	5.25	+1.31
1.1	Շահառուներ	64	3.46	4.08	+0.62
1.1.1	Ոռոգում	16	3.95	4.98	+1.03
1.1.2	Խմելու ջուր	20	3.25	3.24	-0.01
1.1.3	Գազ	24	3.69	4.53	+0.84
1.1.4	Ճանապարհ	4	1.15	1.98	+0.83
1.2	Կոնտրոլ խումբ	47	4.58	6.85	+2.27


Եկամուտների ավելացման տեսանկյունից, շահառու համայնքներից ավելի բարձր աճ են ապահովել ոռոգման շահառու համայնքները: Շահառու համայնքների եկամուտների աճի համեմատական ցածր մակարդակը գրանցվել է խմելու ջրամատակարարման շահառու համայնքների «շնորհիվ»:

Ոռոգում

14. ՇՀՖԾ շրջանակներում, 2009-2010 թթ. ոռոգման ենթածրագրեր են իրականացվել հանրապետության Արարատի, Արմավիրի, Տավուշի և Վայոց Ձորի մարզերի 12 համայնքներում: Նշված համայնքներից հարցումներով ընդգրկվել են Արարատի, Արմավիրի և Վայոց Ձորի մարզերի 4 համայնքներ, որոնցում, բացի համայնքների 4 ղեկավարներից հարցվել են նաև 16 ֆերմերային տնտեսություններ:

15. Բացի հարցման արդյունքներից, ոռոգման ենթակառուցվածքի ազդեցության գնահատման համար, ոռոգման ենթաբաղադրիչի շահառու հանդիսացող 12 համայնքներից 11-ի վերաբերյալ (Արտաշատ քաղաքի տվյալները չեն ամփոփվել, արժանահավատության տեսանկյունից կասկածելի լինելու պատճառով) մարզային վիճակագրական մարմիններից տեղեկատվություն է հավաքագրվել այդ համայնքներում ցանքատարածությունների կառուցվածքային փոփոխությունների վերաբերյալ (Հավելված 4): 2013թ. տվյալներով, համեմատած մինչծրագրային տվյալների հետ, շահառու 12 համայնքներում ցանքատարածություններն ավելացել են 624 հա-ով կամ 13.9 %: Այն դեպքում, երբ դիտարկվող ժամանակահատվածում (2008-2012թթ.) հանրապետության ցանքատարածությունների ավելացումը կազմել է ընդամենը 0.1 տոկոս⁶: Ընդ որում, շահառու համայնքներում, բացի բանջարանոցային մշակաբույսերից, մնացած մշակաբույսերի տարածքների ավելացում է գրանցվել (տես Նկար 4-ը):

⁶- Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2008-2012



16. Ինչ վերաբերում է բանջարանոցային մշակաբույսերի տարածքների նվազմանը, ապա ինչպես երևում է Հավելված 4-ից, այն տեղի է ունեցել Արմավիրի մարզի Արմավիր և Արտամեստ համայնքներում, որտեղ բանջարանոցային մշակաբույսերը փոխարինվել են պտղի և խաղողի այգիներով: Ֆերմերների կողմից երկարաժամկետ ներդրումներ կատարելու փաստը խոսում է կառուցված ոռոգման համակարգերի կայունության նկատմամբ ֆերմերների վստահության ավելացման մասին:

17. ՇՀՖԾ շրջանակներում ոռոգման ենթածրագրեր են իրականացվել հանրապետության Արարատի, Արմավիրի, Տավուշի և Վայոց Ձորի մարզերում: Հաշվի առնելով բուսաբուծության ճյուղի մասնագիտացման ուղղությունները և գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու համար ոռոգման պարտադիր լինելը, ոռոգման համար կատարվող ներդրումների արդյունավետության գնահատման համար ֆինանսական վերլուծություններ կատարվեցին 2 մոդելների համար. 1. հարթավայրային, որում միավորվեցին Արարատի և Արմավիրի մարզերը և 2. նախալեռնային՝ Վայոց Ձորի մարզը⁷: Բացի բուսաբուծության մասնագիտացման տարբեր ուղղություններից, Վայոց Ձորի մարզում ոռոգման ջրի ինքնարժեքը մոտ 2 անգամ գերազանցում է Արարատյան հարթավայրի ոռոգման ջրի ինքնարժեքին (պայմանավորված ջրի պոմպերով մատակարարման մեծ բաժնով), ինչը, ճիշտ է ֆինանսապես չի անդրադառնում ֆերմերների վրա, սակայն զգալիորեն ավելացնում է ոռոգման ջրի համար տրվող սուբսիդիայի գումարը:

18. Ոռոգման ազդեցությունը դիտարկվեց եկամտի ավելացման հնարավոր 2 ուղղություններով. 1) ոռոգման շահառու համայնքներում ցանքերի տարածքների ավելացմամբ և 2) ոռոգման բարելավման արդյունքում ցանքերի կառուցվածքային փոփոխություններով, որը կարող է բերել եկամուտների ավելացման: Բերքատվության ավելացման ազդեցությունը չի գնահատվել, քանի որ հարցումներով ընդգրկված ոռոգման շահառու 4 համայնքների ֆերմերների մոտ, մինչև ծրագիրը և ծրագրից հետո մշակաբույսերի բերքատվության աճը ընդհանուր առմամբ չէր գերազանցում դիտարկվող մյուս խմբերի տնտեսություններում գրանցված բերքատվության աճին (Աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Մշակաբույսերի բերքատվությունը, տ/հա

	Ընդամենը հարցում		Շահառուներ		Ոռոգման շահառուներ		Կոնտրոլ խումբ	
	2009	2013	2009	2013	2009	2013	2009	2013
Հացահատիկ	2.1	2.2	2.9	3.0	1.5	1.8	1.3	1.5
Կարտոֆիլ	36.3	30.1	17.8	15.5	10.8	14.3	46.7	41.9
Բանջարեղեն	13.9	15.5	11.7	15.3	7.1	7.0	18.2	16.2
Պտուղ	10.5	7.9	14.9	12.1	8.3	2.0	8.4	5.8
Խաղող	12.8	11.9	10.8	13.6	12.6	13.8	13.8	11.0
Կերեր	6.3	6.3	5.5	5.5	3.3	4.0	8.2	8.5

⁷ Տավուշի մարզը հարցումներով չի ընդգրկվել

19. Ինչպես վկայում են ֆինանսական վերլուծության 2 մոդելների տվյալները (Հավելված 5 և Հավելված 6), ներդրումների վերադարձը հարթավայրային մոդելի դեպքում ավելի արդյունավետ է քան նախալեռնային մոդելի դեպքում:

20. Ինչպես ընդամենը ընտրանքային համակցության, այնպես էլ ոռոգման շահառու համայնքների ֆերմերների տնամերձ հողերի ոռոգման եղանակների միջև վերջին 5 տարիների ընթացքում ոչ մի փոփոխություն չի կատարվել: Հարցված 21 ֆերմերներ (որից 3-ը ոռոգման շահառու հանդիսացող Վայոց Ձորի Գոմք համայնքից), ինչպես 2009թ., այդպես էլ այժմ շարունակում են տնամերձ հողամասը ոռոգել խմելու ջրի աղբյուրից: Սա պայմանավորված է նրանով, որ մասնավորապես Գոմք համայնքում տեղադրված չեն խմելու ջրի հաշվիչներ և համայնքապետարանը խմելու ջրի վարձ չի հավաքում:

21. Ոռոգման շահառու համայնքներում կերային մշակաբույսերի տարածքների ավելացումը հանգեցրել է այդ համայնքներում անասնազխաքանակի աճին:

Աղյուսակ 5. Անասունների գլխաքանակը աճը մինչև ծրագիրը և հետո, 1 տնտեսության հաշվով, գլուխ

	Ընդամենը հարցում	այդ թվում		
		Շահառուներ	Ոռոգման շահառուներ	Կոնտրոլ խումբ
խոշոր եղջերավոր անասուններ	+1.2	+2.6	+5.8	-1.4
որից՝ կովեր	+1.0	+1.4	+2.0	+0.3
խոզեր	+3.3	+5.0	+8.2	+1.5
Ոչխարներ	+13.7	-3.3	-17.8	+40.7

Աղյուսակ 5-ի տվյալները վկայում են, որ անասնազխաքանակի (բացի ոչխարներից) ամենաբարձր աճը արձանագրվել է ոռոգման շահառուների խմբում, որտեղ, ինչպես երևում է ոչխարաբուծությունը իր տեղը զիջում է տավարաբուծությանը և խոզաբուծությանը:

22. Ոռոգման ենթածրագրերով ոռոգելի տարածքների և շահառուների պլանավորված ցուցանիշները փաստացի կատարվել են:

23. Ընդհանուր առմամբ ոռոգման ծրագրերի իրականացումը գնահատվում է **Չափավոր քավարար:**

Դրենաժային ծրագրեր

24. 2009-2010 թթ. հանրապետության Գեղարքունիքի մարզի 5 համայնքում և Տավուշի ու Լոռու մարզերի 1-ական համայնքներում ՇՀՖԾ շրջանակներում իրականացվել են գետերի հունների, սելավատարերի, ջրահեռացման համակարգերի մաքրման, լայնացման, հենապատնեշների կառուցման դրենաժային աշխատանքներ: Իրականացված 1 ծրագրի միջին արժեքը կազմել է 45.750 ԱՄՆ դոլար:

25. ՇՀՖԾ ենթակառուցվածքների ազդեցության գնահատման նպատակով անցկացված հետազոտության աշխատանքներում դրենաժային ծրագրերի արդյունավետության գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվությունը հավաքագրվել է բոլոր շահառու համայնքների ղեկավարների հետ ունեցած հեռախոսահարցազրույցների միջոցով: Հեռախոսահարցազրույցներն անցկացվել են ԳՁՄՀ 2013թ. Աջակցության հաշվետվության Աշխատանքային փաստաթուղթ 2-ում առաջարկված հարցաթերթի միջոցով:

26. ՇՀՖԾ կողմից իրականացված դրենաժային ծրագրերի հիմնական առանձնահատկությունն այն է, որ այդ ծրագրերի արդյունավետ գործունեության ժամանակը կարճ է՝ 3-4 տարի, որից հետո նոր ներդրում կատարելու անհրաժեշտություն է առաջանում: Սա, իհարկե չի նշանակում թե այդ ծրագրերն ոչ արդյունավետ են և անհրաժեշտ է հետագայում հրաժարվել նմանատիպ

ծրագրերից: Դրենաժային ծրագրերի ազդեցության գնահատման տվյալները լիովին այլ բան են ասում:

27. Հարցման ընթացքում հավաքագրվեց շահառու համայնքներում հեղեղումների տեսանկյունից ռիսկային բնակարանների և գյուղատնտեսական հողատեսքերի, դրանց հասցող վնասների չափերի, հեղեղումների հաճախականության և այլ տեղեկատվություն, որը հնարավորություն տվեց գնահատել դրենաժային ծրագրերի իրականացման արդյունքում ապահովագրված հնարավոր կորուստների չափը: Դրենաժային ծրագրերի ազդեցության գնահատման հաշվարկները բերված են Հավելված 7-ում:

28. Դրենաժային ծրագրերի փաստացի շահառուների թիվը կազմում է 465 տնային տնտեսություններ, որոնք այդ ծրագրերի շնորհիվ խուսափել են վերջին 3-4 տարիներին տեղի ունեցած հեղեղումներից: Այս տարիների ընթացքում շահառու 7 համայնքներում տեղի են ունեցել ընդհանուր թվով 21 տարբեր ուժգնության հեղեղումներ, որոնք, ըստ համայնքների ղեկավարների գնահատականների լուրջ վնասներ կարող էին պատճառել դրենաժային ծրագրերի իրականացված չլինելու դեպքում:

29. Դրենաժային ծրագրերի շնորհիվ 7 համայնքներում վերջին 3-4 տարիներին ապահովագրվել են թվով 125 առանձնատներ, իրենց օժանդակ կառույցներով, 320 հա գյուղատնտեսական ցանքատարածություններ, ներառյալ տնամերձները:

30. Ըստ համայնքների ղեկավարների գնահատման, մինչև ՇՀՖԾ ծրագրերի իրականացումը, տեղի ունեցած հեղեղումների արդյունքում վնասված միջին առանձնատանը հասցված վնասը կազմել է 3700-4000 ԱՄՆ դոլար, իսկ գյուղատնտեսական 320 հա հողատեսքից սպասվող բերքը կորցվել է ամբողջովին: Ըստ հարցման տվյալների այդ հողատեսքերից ստացվող միջին տարեկան զուտ եկամուտը կազմում է 1,3 մլն. ԱՄՆ դոլար:

31. Այսպիսով, հաշվարկները ցույց են տալիս, որ դրենաժային ծրագրերի շնորհիվ չկայացած կորուստները կամ ապահովագրված միջոցները կազմել են ավելի քան 2.4 մլն ԱՄՆ դոլար, որը 7.5 անգամ գերազանցում է այդ ծրագրերի վրա կատարված ընդհանուր ծախսերի գումարին:

32. Չնայած կայունության ցածր մակարդակին, դրենաժային ծրագրերի արդյունավետության նման բարձր մակարդակը լիովին հիմնավորում է պարբերաբար՝ 3-4 տարին մեկ անգամ այդ ծրագրերի իրականացման անհրաժեշտությունը, եթե իհարկե չգտնվեն խնդիրների հիմնովին լուծման և տնտեսապես արդյունավետ այլ լուծումներ:

33. Դրենաժային ծրագրերի շահառու համայնքների ղեկավարների հետ հարցազրույցների ընթացքում, պարզվել է, որ որոշ համայնքներ, ՇՀՖԾ ենթածրագրերի իրականացման արդյունքում, կարողացել են գտնել այլ կազմակերպություններ, որոնք 3-4 տարի հետո նորից մաքրել են սելավատարները կամ գետերի հունը:

34. Ընդհանուր առմամբ դրենաժային ծրագրերի իրականացումը կարելի է հաջողակ համարել և գնահատել **Բավարար:**

Խմելու ջրամատակարարում

35. 2008-2010 թթ. հանրապետության 8 մարզերի 26 գյուղական համայնքներում ՇՀՖԾ շրջանակներում իրականացվել են խմելու ջրամատակարարման համակարգերի բարելավման ծրագրեր:

36. Խմելու ջրամատակարարման ծրագրերի ազդեցության գնահատման նպատակով շահառու 5 համայնքների (Արարատի մարզի Ոսկետափ, Արմավիրի մարզի Այգեշատ, Լոռու մարզի Կաճաճկուտ, Շիրակի մարզի Պենզաշեն և Գեղարքունիքի մարզի Վարդենիկ) 20 գյուղացիական տնտեսություններում համապատասխան հարցաթերթի միջոցով իրականացվել են հարցումներ: Հարցումներ են իրականացվել նաև նշված 5 համայնքների ղեկավարների հետ:

37. Հարցման պահին ընդամենը ընտրանքային համակցության (112 տնտեսություն) 92 %-ի խմելու ջրի հիմնական աղբուրը ծորակն է կացարանում կամ բակում, որը նույնն է ինչ որ կար

մինչև ծրագրերի իրականացումը՝ 2009թ.: Խմելու ջրամատակարարման շահառու համայնքներում, կացարանում կամ բակում խմելու ջրի աղբյուր ունեն հարցվածների 87.5 %-ը, որը նույնպես նույն մակարդակի վրա է մնացել:

38. Ջրամատակարարման վիճակի բարելավում է արձանագրվել և շահառուների և կոնտրոլ խմբում, որը նշանակում է, որ բարելավումն առկա է ողջ հանրապետությունում:

Աղյուսակ 6. Խմելու ջրամատակարարում

	Ընդամենը հարցում		շահառու համայնքներ		կոնտրոլ խումբ	
	2009	2013	2009	2013	2009	2013
Ամեն օր	73.0	81.1	65.0	80.0	74.7	81.3
Ավելի քան 15 օր	14.4	12.6	35.0	20.0	9.9	11.0
15 օրից պակաս	12.6	6.3	-	-	15.4	7.7

Հարցման տվյալներով, դիտարկվող ժամանակահատվածում ընդամենը ընտրանքային համակցության համայնքներում ամեն օր ջուր ստացողների տեսակարար կշիռն ավելացել է 8.1%-ով, որից շահառու համայնքներում՝ 15 %-ով, իսկ կոնտրոլ խմբում՝ 6.6 %-ով: Աղյուսակ 6-ի տվյալները վկայում են, որ ՇՀՖԾ կողմից շահառու համայնքների ընտրությունը ճիշտ է կատարվել և ընտրված համայնքներն ծրագրի սկզբում ունեցել են ջրամատակարարման համեմատական ցածր մակարդակ:

39. Ընտրանքային համակցությունում, 2009թ. 2013թ. համեմատությամբ, օրվա ընթացքում ջրի մատակարարման միջին տևողությունն ավելացել է 0.6 ժամով (11.4-12.0 ժամ), այդ թվում կոնտրոլ խմբում՝ 0.5 ժամով (11.7-12.2 ժամ), իսկ շահառուների խմբում՝ 0.7 ժամով (10.1-10.8 ժամ):

40. Ջրագծերի վրա հաշվիչների տեղադրման և խմելու ջրի դիմաց վճարման հարցերում, շահառու համայնքների և կոնտրոլ խմբի համայնքների տվյալներն առանձնապես չեն տարբերվում: Խմելու ջրամատակարարման շահառու, հարցումներով ընդգրկված 5 համայնքներից միայն 1-ում՝ Արարատի մարզի Ոսկետափ համայնքում էր տեղադրված խմելու ջրի հաշվիչներ: Միգուցե արժի, ջրամատակարարման հետագա ծրագրերում, համայնքի վրա պատասխանատվություն դնել հաշվիչների տեղադրման և խմելու ջրի վարձավճարների սահմանման համար:

41. Խմելու ջրամատակարարման շահառու համայնքների հարցված տնտեսությունների 30 %-ը տնամերձ հողերը ոռոգում են խմելու ջրով: Այս ցուցանիշը նույնն է եղել նաև խմելու ջրամատակարարման ծրագրերն իրականացնելուց առաջ:

42. Խմելու ջրամատակարարման ծրագրերի արդյունքում ավելացված արժեք է ստացվում անասունների մթերատվության բարձրացման, ինչպես նաև ջրի հավաքման ժամանակի խնայողության միջոցով: Ընդհանուր առմամբ խմելու ջրամատակարարման ծրագրերի շնորհիվ անասունների մթերատվության ավելացման և ժամանակի խնայման արդյունքում տարեկան ավելացած արժեքը կազմել է 933 հազ. ԱՄՆ դոլար: Ներդրումների փոխհատուցման ներքին տոկոսադրույքը բավականին բարձր է՝ 46 %: Խմելու ջրամատակարարման ծրագրերի ֆինանսական վերլուծությունը տրված է Հավելված 8-ում:

43. Ջրամատակարարումը զգալիորեն բարելավում է կանանց կյանքը, քանի որ ընտանիքի և անասունների համար անհրաժեշտ ջուրը կանայք բերում են ձեռքով:

44. Ընդհանուր առմամբ խմելու ջրամատակարարման ծրագրերի իրականացումը կարելի է հաջողակ համարել և գնահատել **բավարար:**

Գազիֆիկացում

45. ՇՖՅԾ Գյուղական ենթակառուցվածքներ բաղադրիչի միջոցների 3/4-ն ուղղվել գազիֆիկացիայի ծրագրերին:
46. Գազիֆիկացիայի ծրագրերի ազդեցության գնահատման նպատակով շահառու 6 համայնքների (Արարատի մարզի Ավշար և Սիփանիկ, Արագածոտնի մարզի Օհանավան, Լոռու մարզի Մեծ Այրում, Շիրակի մարզի Իսահակյան և Գեղարքունիքի մարզի Ճամբարակ) 28 գյուղացիական տնտեսություններում համապատասխան հարցաթերթի միջոցով իրականացվել են հարցումներ: Հարցումներ են իրականացվել նաև նշված 6 համայնքների ղեկավարների հետ:
47. Գազիֆիկացիան, ի տարբերություն մյուս ենթակառուցվածքների աչքի է ընկել էֆեկտիվության ցածր մակարդակով: Համաձայն ԾԻԳ-ի հավաքագրված տվյալների 2013թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ գազի մայր գծերին պոտենցիալ շահառուների միացման աստիճանը կազմում է 34.6 %:
48. Գազի գծին դեռևս չմիացած գյուղացիական տնտեսություններն իրենց նման որոշումը պատճառաբանում են գազի մայր գծի բնակարանից հեռու լինելու, միացման ծախսերի բարձր լինելու և գազի գնի թանկ լինելու հանգամանքով: Ըստ հարցված տնտեսությունների, գազի մայր գծին միանալու 1 տնտեսության միջին ծախսը կազմում է 220.000 դրամ և տատանվում է 100.000-ից մինչև 500.000 դրամի սահմաններում: Հանրապետության գյուղատնտեսության եկամտաբերության մակարդակի համեմատությամբ այս ծախսերը խիստ զգալի են:
49. Գազի գծին միացած տնտեսություններում օգտագործվող վառելիքի կառուցվածքի փոփոխությունները, ինչպես երևում է Աղյուսակ 7-ից, ցույց են տալիս, որ գազը դանդաղորեն դուրս է մղում մյուս վառելիքներին: Մասնավորապես, հեղուկ գազը, որը թանկ է բնական գազից, այլևս չի օգտագործվում: Սնունդ պատրաստելու և կենցաղային կարիքների համար հիմնականում բնական գազ է օգտագործվում, իսկ տան ջեռուցման հարցում, գազի տեսակարար կշռի ավելացում է արձանագրվել փայտի և աթարի հաշվին:

Աղյուսակ 7. Տնտեսությունում օգտագործվող վառելիքի կառուցվածքը, %

		Էլեկտրոներգիա	փայտ	գազ ⁸	աթար
Սնունդ պատրաստելու համար	մինչև ծրագիրը	3.2	9.7	86.0	1.1
	ծրագրից հետո	1.1	2.2	96.7	
Տան ջեռուցման համար	մինչև ծրագիրը	1.1	62.3	22.6	14
	ծրագրից հետո	1.1	57.0	30.1	11.8
Կենցաղում	մինչև ծրագիրը	2.2	21.5	72.0	4.3
	ծրագրից հետո	1.1	11.8	83.9	3.2

50. Հարցման տվյալներով, բնակարանը փայտով ջեռուցող տնտեսություններում, ձմռան ընթացքում միջին հաշվով ջեռուցվում է բնակարանի 61.7 քառ. մետր տարածքը, աթարով ջեռուցողների մոտ այն կազմում է 61.9 քառ. մետր, այն դեպքում, երբ գազով ջեռուցողների մոտ ջեռուցվող տարածքը հասնում է 88.8 քառ. մետրի:
51. Ձմռան ընթացքում բնակարանի ջեռուցման ծախսը 2013թ., ընդամենը ընտրանքային համակցության միջին 1 տնտեսության հաշվով կազմել է 197.7 հազ. դրամ, որից.

Էլեկտրոներգիա	7,5 հազ.դրամ
փայտ	107,1 հազ.դրամ
գազ	55,3 հազ.դրամ
աթար	25,9 հազ.դրամ
այլ	1,9 հազ.դրամ

52. Բնակարանը հիմնականում փայտով ջեռուցող տնտեսություններում փայտի ծախսը ձմռան

⁸ -մինչև ծրագիրը տնտեսությունները օգտագործել են հեղուկ գազ

ամիսներին կազմել է 136.9 հազ. դրամ, աթարով ջեռուցող տնտեսություններում աթարի ծախսը⁹ կազմել է 111.3 հազ.դրամ և գազով ջեռուցող տնտեսություններում գազի ծախսը կազմել է 165.3 հազ.դրամ:

53. Ըստ հաշվարկների, ձմռան ամիսներին բնակարանը փայտով ջեռուցող տնտեսությունների բնակարանի ջեռուցման 1 քառ. մետրի վրա փայտի միջին ծախսը կազմում է 2219 դրամ, աթարով ջեռուցվող տնտեսություններում աթարի ծախսը կազմում է 1798 դրամ/ք.մ և գազով ջեռուցվող տնտեսություններում գազի ծախսը կազմում է 1861 դրամ/ք.մ: Այսինքն, եթե հաշվի առնենք այն փաստը, որ աթարի համար հունք հանդիսացող գոմաղբը միաժամանակ արժեքավոր պարարտանյութ է, ապա պարզ է դառնում, որ բնակարանի ջեռուցման ամենաէժան վառելիքը գազն է:

54. Նախնական գնահատումներով կարծիք էր ձևավորվել, որ գազի գծին չմիացող տնտեսությունները հավանաբար աղքատ տնտեսություններն են: Հարցման տվյալներով պարզվեց, որ ՇՀՖԾ շահառու գազիֆիկացված համայնքներում գազի գծին չմիացած 6 տնտեսություններից 4-ը գտնվում են կանխիկ եկամտի միջին խմբերում, որոնց տարեկան կանխիկ եկամուտը գտնվում է 2-10 մլն. դրամ միջակայքում: Գազի գծին չմիացած մյուս 2 տնտեսությունների եկամուտը կազմում է 1-2 մլն. դրամ:

55. Այսպիսով, գազի թանկ լինելը չի հիմնավորվում և որպես հիմնական պատճառ է մնում մայր գծին միացման բարձր ծախսերը: Այս ծախսի կատարման դժվարությունը գյուղացու համար ծախսի միանվագ կատարելու հանգամանքն է: Որպես հարցի լուծում կարելի է առաջարկել Հայրուսագազարդին, որ վերջինս կատարի գյուղացու միացման ծախսերը, որը կփակվի մաս-մաս` 1 տարվա ընթացքում: Արդյունքում, Հայրուսագազարդը ավելացնելով բաժանորդների թիվը կավելացնի գազի սպառման ծավալները և ըստ այդմ էլ` իր եկամուտները:

Որպես խնդրի այլ լուծում, միգուցե ԳՖԿ-ի միջոցներից անտոկոս (կամ ցածր տոկոսներով) վարկեր տրամադրվեն շահառու համայնքների տնտեսություններին գազի մայր գծին միանալու համար:

56. Գյուղատնտեսական մթերքների վերամշակման համար օգտագործվող վառելիքի բաժնում դիտարկվող ժամանակահատվածում գազի բաժինը ավելացել է: Ընդ որում, եթե հարցված բոլոր տնտեսություններում գազի բաժինը վերամշակման համար ավելացել է 1.7 %-ով, ապա ՇՀՖԾ գազաֆիկացման շահառու համայնքների տնտեսություններում այն կազմել է 8.8 % (Աղյուսակ 8):

Աղյուսակ 8. Գազի ծախսը գյուղմթերքների վերամշակման համար

	Ընդամենը հարցված համայնքներում		այդ թվում շահառու համայնքներում	
	2009	2013	2009	2013
Վերամշակման համար օգտագործվող վառելիքը, %				
այլ վառելիք	58.4	56.7	62.3	53.5
գազ	41.6	43.3	37.7	46.5

57. Գազիֆիկացումը լավ արդյունքներ է ապահովում հանրապետության անտառապատ տարածքներում (տես Աղյուսակ 9-ը), որը բնապահպանական տեսանկյունից խիստ կարևոր է անտառազուրկ Հայաստանի համար:

⁹ -շուկայական գներով

Աղյուսակ 9. Բնակարանի ջեռուցման վառելիքի ծախսը, միջին 1 տնտեսության հաշվով
հազ. դրամ

	Փայտ	Բնական գազ	Աթար
Ընդամենը հարցում			
Մինչև ծրագիրը	98.2	38.7	22.9
Ծրագրից հետո	107.1	55.3	25.9
WP+,-WOP	8.9	16.6	3.0
Գազիֆիկացիայի շահառուներ			
Մինչև ծրագիրը	102.9	18.6	32.3
Ծրագրից հետո	93.9	48.5	34.6
WP+,-WOP	-9.0	29.9	2.3
Անտառապատ տարածքներ, ընդամենը հարցում			
Մինչև ծրագիրը	103.3	2.5	13.8
Ծրագրից հետո	99.2	43.1	16.7
WP+,-WOP	-4.1	40.6	2.9
Անտառապատ տարածքներ, շահառուներ			
Մինչև ծրագիրը	102.5	3.8	18.1
Ծրագրից հետո	82.5	64.6	21.3
WP+,-WOP	-20.0	60.8	3.2
Անտառագուրկ տարածքներ, ընդամենը հարցում			
Մինչև ծրագիրը	97.6	43.1	24.0
Ծրագրից հետո	108	56.8	27.0
WP+,-WOP	10.4	13.7	3.0
Անտառագուրկ տարածքներ, շահառուներ			
Մինչև ծրագիրը	103.0	24.5	38.0
Ծրագրից հետո	98.5	42.0	39.9
WP+,-WOP	-4.5	39.9	1.9

Պարզ հաշվարկները ցույց են տալիս թե ինչպիսի արդյունքներ կարելի է ստանալ բոլոր պոտենցիալ շահառուներին գազի գծերին միացնելու դեպքում:

58. ՇՀՖԾ գազիֆիկացիայի ծրագրերի արդյունքում միջին 1 տնտեսության հաշվով տարեկան 9 հազ. դրամով պակասել է ջեռուցման համար փայտի օգտագործումը: Ներկա դրությամբ բոլոր փաստացի շահառուների (7183) հաշվով այդ գումարը կկազմի մոտ 65 մլն. դրամ կամ մոտ 160 հազ. ԱՄՆ դոլար: Փաստացի խնայվել է 4330 խոր. մետր (65մլն./15.000 դրամ) փայտ, որը համարժեք է 8660 հատ ծառի

59. Գազիֆիկացիայի ծրագրերի իրականացումը ցածր էֆեկտիվության պատճառով **Չափավոր քավարար** է:

Ճանապարհաշինարարություն

60. ՇՀՖԾ շրջանակներում իրականացվել են 2 ճանապարհաշինարարական ծրագրեր, Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում և Գեղարքունիքի մարզի ճամբարակ քաղաքում, որտեղ վերանորոգվել են ներհամայնքային ճանապարհները: Ճանապարհաշինարարական ծրագրերի իրականացման արդյունքում լրացուցիչ արժեքներ են ստեղծվում գյուղատնտեսությամբ զբաղվողների աշխատանքային ժամանակի խնայողության, ինչպես նաև ավտոմեքենաների վերանորոգման ծախսերի նվազեցման միջոցով: Ճանապարհաշինարարական ծրագրերի համար ֆինանսական վերլուծությունը տրված է Հավելված 9-ում: Ներհամայնքային ճանապարհների բարեկարգման շնորհիվ, շահառու 2 համայնքներում ավտոմեքենաների վերանորոգման ծախսերի նվազեցման շնորհիվ խնայողությունները միջին տարեկան առումով

կազմել են 134,1 հազ. ԱՄՆ դոլար: Ներդրման փոխհատուցման ներքին տոկոսադրույքը կազմել է 21%, իսկ զուտ ընթացիկ արժեքը՝ 323.7 հազ. ԱՄՆ դոլար: Տրված ֆինանսական վերլուծություններում ժամանակի խնայողության միջոցով ավելացված արժեքի հաշվարկներ չեն կատարվել, քանի որ 2 քաղաքային համայնքներում (Դիլիջան, ճամբարակ) իրականացված ծրագրերը վերաբերել են միայն ներհամայնքային ճանապարհների բարեկարգմանը:

61. Ընդհանուր առմամբ ճանապարհաշինարարության ծրագրերի իրականացումը կարելի է հաջողակ համարել և գնահատել **բավարար**:

Ենթածրագրերի տնտեսական ամփոփ արդյունքներ

62. Գյուղական ենթակառուցվածքներ բաղադրիչի ենթածրագրերի ֆինանսական վերլուծությունների արդյունքում հաշվարկվեցին դրանց ամբողջական ոռոգման և խմելու ջրամատակարարման ենթածրագրերի շնորհիվ ավելացված արժեքը և դրենաժային ու ճանապարհաշինարարական ենթածրագրերի շնորհիվ խնայված արժեքը¹⁰, որոնք բերված են Աղյուսակ 10-ում: Ընդ որում, որպես տարեկան արժեք է ընդունվել ենթածրագրերի ամբողջական արդյունքների ստացման տարվա տվյալը:

Աղյուսակ 10. Ավելացված և խնայված արժեք

	Տարեկան ավելացված և խնայված զուտ արժեք
	000 USD
Ոռոգման ենթածրագրեր	765.0
Խմելու ջրամատակարարման ենթածրագրեր	896.0
Ընդամենը ավելացված զուտ արժեք	1,661.0
Ծրագրի շնորհիվ խնայված միջոցներ	
Դրենաժային ենթածրագրեր	481.9
Ճանապարհաշինարարական ենթածրագրեր	128.2
Ընդամենը խնայված ավելացված զուտ արժեք	610.1
Ընդամենը ավելացված և խնայված զուտ արժեք	2,271.1

63. Ենթածրագրերի շնորհիվ տարվա ընթացքում ավելացված և խնայված արժեքը կազմում է 2.3 մլն. ԱՄՆ դոլար, որը կազմում է ընդամենը ենթակառուցվածքների համար կատարված ներդրումների (14.5 մլն. ԱՄՆ դոլար) 16 %-ը և առանց գաիֆիկացիայի ներդրումների (3.9 մլն. ԱՄՆ դոլար) մոտ 60 %-ը:

64. «Գյուղական ենթակառուցվածքներ» բաղադրիչի շրջանակներում կատարված ներդրումների տնտեսական բազմապատկչի ազդեցության գնահատման համար հաշվարկված սպառման սահմանային հակվածության մակարդակը վերջին տարիների համար կազմեց 85.6 %: Ըստ սպառման սահմանային հակվածության այս մակարդակի, ենթակառուցվածքի բաղադրիչի շրջանակներում կատարված 14.5 մլն. ԱՄՆ դոլարի ներդրումների տնտեսական էֆեկտը Հայաստանի տնտեսությունում 2008-2013թթ. կազմել է ավելի քան 50 մլն. ԱՄՆ դոլար:

¹⁰ - գազի ենթածրագրերի համար ֆինանսական վերլուծություններ չեն կատարվել, քանի, որ գազիֆիկացիայի շնորհիվ գյուղմթերքների վերամշակումից ստացված ավելացված արժեքը հաշվարկելու համար անհրաժեշտ տվյալների բազան լիարժեք չէ:

Աղյուսակ 11. Տնտեսական բազմապատկիչը

	2008	2009	2010	TOTAL
Ներդրումներ, ԱՄՆ դոլար	144 511	7 298 420	7 080 196	14 523 127
Սպառում, 2008	144 511			144 511
Սպառում, 2009	123 701	7 298 420		7 422 121
Սպառում, 2010	105 888	6 247 448	7 080 196	13 433 532
Սպառում, 2011	90 640	5 347 815	6 060 648	11 499 103
Սպառում, 2012	77 588	4 577 730	5 187 914	9 843 232
Սպառում, 2013	66 416	3 918 537	4 440 855	8 425 807
Ընդամենը, ԱՄՆ դոլար	608 745	27 389 949	22 769 613	50 768 307
Տնտեսական բազմապատկիչ	4,21	3,75	3,22	3,50

Արդյունքների ամփոփում ըստ չափանիշների

Ակտուալության գնահատում

65. Սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների հասանելիության մակարդակի բարձրացումը կարող է լրջորեն օժանդակել գյուղական աղքատության կայուն կրճատման գործընթացին: ՇՀԾ շրջանակներում գյուղական ենթակառուցվածքների բարելավումը զուգորդվելով գյուղական համեմատական տնտեսական առավելություններ ունեցող առաջնային արտադրողներին տրվող ֆինանսական աջակցության հետ բարենպաստ պայմաններ են ստեղծել գյուղմթերքների արտադրության և իրացման ծավալների ավելացման, նոր աշխատատեղերի ստեղծման հարցում, որը որոշ չափով նպաստել է գյուղական բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:
66. ՇՀԾ նպատակներն, ընդհանուր առմամբ համապատասխանում էին Հայաստանի Հանրապետության զարգացման առաջնահերթություններին՝ գյուղատնտեսության և գյուղական վայրերի զարգացման միջոցով հասնել երկրում գյուղական աղքատության կայուն կրճատմանը: Ծրագրի նպատակները համահունչ են ՀՀ գյուղատնտեսության 2010-2020 թթ. կայուն զարգացման ռազմավարության և ՀՀ-ում աղքատության կրճատման 2006թ. ռազմավարության նպատակներին, ինչպես նաև ԳԶՄՀ՝ երկրում գործունեության նպատակներին:
67. Ծրագրի նպատակները և դրանց հասնելու ուղղությունները համահունչ են ծրագրի թիրախային բոլոր խմբերին՝ ֆերմերային տնտեսություններին, ինքնազբաղվածներին, գործազուրկներին, թերզբաղվածներին և գյուղական կանանց:
68. Նպատակները համընկնում են երկրի զարգացման կառավարության, գյուղական համայնքների, երկրի ագրարային ոլորտում գործող այլ դոնորների և այլ համագործակից գործընկերների նպատակներին և դրանց իրականացման ռազմավարական ուղղություններին:
69. Ծրագրում ընդգրկվել են հիմնական բոլոր ենթակառուցվածքների տեսակները՝ ոռոգում, գազիֆիկացում, դրենաժ, ջրամատակարարում և ճանապարհաշինարարություն: Միջոցների բաշխումն ըստ ենթակառուցվածքների անհավասարաչափ է, որը պայմանավորված է ներքևից՝ համայնքներից ստացված առաջնահերթություններով: Սակայն առանձին դեպքերում (օրինակ գազիֆիկացիա), ելնելով տնտեսական հարմարությունից հարևան համայնքների հետ գազիֆիկացվել է նաև այլ՝ ոչ գազիֆիկացիայի առաջնահերթություն ունեցող համայնքներ:
70. Ծրագրի արդյունավետությունն ավելի կբարձրանար, եթե ռազմավարությունում ներառվեր գյուղատնտեսական մթերքների և արտադրանքի իրացման խթանումը, որի հիմնական ուղղությունները կհանդիսանային. 1)արտահանման մեծ ներուժ ունեցող արտադրությունների խրախուսումը և 2)շուկայական ենթակառուցվածքների զարգացումը:
71. Սոցիալական ենթակառուցվածքների, ինչպիսիք են խմելու ջրամատակարարումը և գազիֆիկացիան, հասանելիության ավելացումը մեծապես նպաստել է գյուղական կանանց կենսամակարդակի բարելավմանը:
72. Ծրագրի մասնակցային բաղադրիչը ուժեղացման կարիք ունի: Համայնքի առաջնահերթությունը լավագույն դեպքում ձևակերպվում է համայնքի ղեկավարի կողմից, որին համայնքը գրեթե չի մասնակցում: Փորձը ցույց է տալիս, որ առանձին դեպքերում համայնքի ղեկավարի առաջնահերթություն համարվող խնդիրը, տարբերվում է համայնքի կողմից առաջնահերթություն համարվող խնդրից:
73. Ընդհանուր առմամբ, ՇՀԾ «Գյուղական ենթակառուցվածքներ» բաղադրիչի ակտուալության ռեյտինգը **Բավարար** (5) է, քանի որ ծրագրի նպատակներն ընդհանուր առմամբ համապատասխանում են երկրի կողմից իրականացվող աղքատության կրճատման ռազմավարությանը և գյուղական աղքատների կարիքներին:

Էֆեկտիվության գնահատում (Effectiveness)

74. Դրված նպատակների իրականացման և սպասվելիք արդյունքներին հասնելու տեսանկյունից Գյուղական ենթակառուցվածքներ բաղադրիչի խմելու ջրամատակարարման, դրենաժային և ճանապարհաշինարարական ենթածրագրերի իրականացումը էֆեկտիվ էր: Ընդհանուր առմամբ այս ենթակառուցվածքների բարելավմամբ դրված նպատակները իրականացվել են և ստացված արդյունքները համապատասխանում են ծրագրային սպասվելիք արդյունքներին:
75. Էֆեկտիվության առումով խնդիրներ ունեն գազիֆիկացիայի և ոռոգման ենթածրագրերը: Հետազոտության իրականացման ժամանակ (հոկտեմբեր) մայր գծին միացումների ընդհանուր թիվը կազմում էր 7183, որը պոտենցիալ շահառուների 34.6 %-ն է միայն:
76. Միացումների նման ցածր պատճառները շատ են: Նախ մի քանի գազատարեր դեռևս շահագործման չեն հանձնվել կամ չեն ընդունվել Հայռուսգազարդի կողմից: Որոշ համայնքներում (օրինակ Նորամարգ, Արարատի մարզ) գազատարը հասցվել է մինչև դպրոց և մանկապարտեզ, իսկ ներհամայնքային ցանց չի կառուցվել: Չմիացման լուրջ պատճառ է գազի գծին միացման մեծ ծախսերը, որոնք գյուղացին պետք է միանվագ կերպով կատարի:
77. Ոռոգման ենթածրագրերով պոտենցիալ շահառուների 92.9 %-ն են հարցման պահին օգտվում ոռոգման ենթակառուցվածքների մատուցած ծառայություններից: Նախատեսված 2086 հա-ի փոխարեն ոռոգելի է դարձել 1429 հա, որը կազմում է նախատեսվածի 68.5 %-ը:
78. Ոռոգման ենթածրագրերի արդյունքային ցուցանիշները հիմնականում չեն կատարվել Տավուշի մարզի Ոսկան-Ոսկեպար-Բաղանիս-Կոթի ոռոգման սխեմայի համայնքներում: Ոռոգման ենթածրագրի իրականացման արդյունքում նախատեսվում էր ոռոգման այս սխեմայի միջոցով ոռոգելի դարձնել 950 հա հողատարածք, որը պատկանում էր թվով 1594 շահառուների: Փաստացի, վերը բերված համայնքներում, ներկա պահին ոռոգման հնարավորություն է ստացել ընդամենը 293 հա հողատարածք, ինչի արդյունքում շահառու են դարձել 1144 գյուղացիական տնտեսություններ:
79. Ոռոգման այս սխեմայի կառուցման նախագծման փուլում տեղ գտած սխալների պառճառով ենթածրագրի իրականացման ժամկետը երկարաձգվել է և լրացուցիչ ծախսեր են առաջացել: Ոռոգման մայր ջրագիծը կառուցվել և միացվել է չգործող ներքին ցանցերին (Կոթի, Ոսկան), որոնց շահագործումն, ինչպես պարզվել է հետազայում, անհնար է, դրանց ամբողջովին մաշված լինելու պատճառով: Հնարավոր էր մինչև նախագծումը գնահատել ներքին ցանցերի պիտանիության մակարդակը:
80. Չնայած, որ մայր ջրագծի առկայությունը նպաստել է նրան, որ Բաղանիսի և Կոթիի համայնքներում այլ դոնորներ (ՇԵՆ ՀԿ) են ներգրավվել ներհամայնքային ցանցի վերակառուցման նպատակով, այնուհանդերձ վերակառուցվել են միայն բնակավայրի ներսի ներհամայնքային ցանցը, որը հնարավորություն է տվել ոռոգել միայն տնամերձ հողամասերը: Բաղանիս համայնքում ներկա պահին ոռոգվող 12 հա-ից բացի կարելի է ոռոգել ևս 70 հա, որը սակայն գտնվում է վտանգավոր գոտում, ինչի պատճառով չի օգտագործվում: Ըստ համայնքապետի, ընթացիկ աշնանը այդ տարածքի վրա 15 հա աշնանացան ցորենի ցանք է կատարվել և հուսով է, որ այդ տարածքից հաջորդ տարի լավ բերք ստանալու դեպքում գյուղացիները հաջորդ աշնանը կմշակեն նաև մնացած 55 հա-ը: Ոսկեպարի համայնքում ներկա դրությամբ կարելի է ոռոգել 200 հա հողատարածք, որը սակայն, համայնքում առկա բարձր աշխատանքային միգրացիայի պատճառով չի մշակվում և վերածվել է խոտհարքի: Սա նորից հիմնավորում է այն միտքը, որ համայնքների առաջնահերթության սահմանման հարցում խնդիրներ կան:
81. Վայոց Ձորի մարզի Խնձորուտ համայնքի ոռոգման մայր ջրագիծը վերանորոգվել և միացվել ներհամայնքային չգործող ցանցին, որի պատճառով մայր ջրագիծն էլ չի գործում: Որպես հետևանք, համայնքում մինչև ծրագիրը ժամանակի համեմատությամբ արձանագրվել է ցանքատարածությունների կրճատում:

82. Դրենաժային ծրագրերի արդյունավետ գործունեության ժամանակը կարճ է և տևում է 3-4 տարի, որից հետո այդ ծրագրերը պետք է նորից կրկնել: Սակայն ծրագրերի ֆինանսական վերլուծությունը ցույց է տալիս, որ կատարված ծախսերն արդարացված են, ինչպես նաև արդարացված են այդ ծրագրերի պարբերական իրականացումները: Երևի թե անհրաժեշտություն կա կատարել տնտեսական արդյունավետության հաշվարկներ գետերի հունները և հեղեղատները ավելի խորը մաքրելու կամ հիմնական ինչ որ այլ լուծումների համար:
83. Հաշվի առնելով վերը նշվածը ՇՀՖԾ «Գյուղական ենթակառուցվածքներ» բաղադրիչի էֆեկտիվության ռեյտինգը **Չափավոր բավարար (4) է:**

Արդյունավետության գնահատում (efficiency)

84. Ոռոգման, խմելու ջրամատակարարման համակարգերի և ճանապարհաշինարարության ծրագրերի ֆինանսական վերլուծությունները ցույց են տալիս, որ ներդրումների փոխհատուցման ներքին տոկոսադրույքներ (IRR) և ներկա զուտ արժեքների (NPV) ցուցանիշները բավականին բարձր են: Դրենաժային ծրագրերի վրա կատարված յուրաքանչյուր 1 ԱՄՆ դոլարի հաշվով 3-4 տարիների ընթացքում ապահովագրվել են մոտ 8 ԱՄՆ դոլարի ակտիվներ:
85. Ոռոգման ծրագրերի շահառու համայնքներում, թե համայնքների ղեկավարների և թե գյուղացիական տնտեսությունների հարցումներով, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության ավելացումն ընդհանուր առմամբ չի գերազանցում կոնտրոլ խմբի համապատասխան ցուցանիշներին: Սակայն ոռոգման բարելավումն այս համայնքներում հանգեցրել էր ցանքատարածությունների կառուցվածքային դրական փոփոխությունների (ցածրարժեք մշակաբույսերի փոխարինում բարձրարժեք մշակաբույսերով), որը ավելացված արժեք ստեղծելու հնարավորություն է ստեղծել:
86. Հարցման տվյալներով ՇՀՖԾ շահառու համայնքների տնտեսություններում մինչև ծրագիրը և ծրագրից հետո եկամտի ավելացումը չի գերազանցում ընդամենը հարցման և կոնտրոլ խմբի տնտեսություններում եկամտի ավելացման չափին: Նույն իրավիճակն է նաև գյուղմթերքների արտադրության և անասնազվաքանակի աճի տվյալներում: Հավանաբար այստեղ դեր է խաղացել այն հանգամանքը, որ ենթակառուցվածքների բաղադրիչի համար որպես կոնտրոլ խումբ են ընտրվել գյուղական ֆինանսներ բաղադրիչի ազդեցության գնահատման համար ընտրված համայնքները, որոնք, ինչպես երևում է, ավելի լավ տվյալներ ունեն:
87. Շահառու համայնքներից միայն ոռոգման շահառու տնտեսություններում է արձանագրվել աշխատանքային միգրացիայի մեկնող մարդկանց թվի կրճատում: Ինչը կարելի է տրամաբանական համարել քանի որ ի տարբերություն գազիֆիկացիայի և ջրամատակարարման ծրագրերի այստեղ լրացուցիչ աշխատատեղեր են ստեղծվում:
88. Խմելու ջրամատակարարման շահառու համայնքներում ամենօրյա ջրամատակարարում ստացողների տեսակարար կշիռը մինչև ծրագիրը 65 %-ից, ծրագրից հետո հասել է 80 %-ի, իսկ օրվա ընթացքում ջրի մատակարարման միջին տևողությունն ավելացել է 0.7 ժամով:
89. Տնտեսությունում բնական գազի օգտագործման հնարավորության արդյունքում խնայված փայտի քանակությունը՝ 4330 խոր. մետր է, կամ փրկվել է 8660 հատ ծառ:
90. ՇՀՖԾ «Գյուղական ենթակառուցվածքներ» բաղադրիչի արդյունավետության ռեյտինգը **Չափավոր բավարար (4)** է:

Կայունության գնահատում

91. Ենթակառուցվածքների ծրագրերի կայունության ռեյտինգը **Չափավոր բավարար (4)** է:

Ենթածրագրերով կառուցված կամ վերանորոգված ենթակառուցվածքները սեփականության իրավունքով հանձնվում են համայնքներին:

- Գազի ցանցերը համայնքի կողմից տրվում են շահագործման Հայռուսգազարդին և դրանց հետագա գործունեության կամ պահպանման խնդիրներ չեն կարող լինել:
- Խմելու ջրագծերը, համայնքները կարող են շահագործել ինքնուրույն կամ շահագործման հանձնել Հայջրմուղին: Առաջին դեպքում ծրագրի կայունության հարցում կարող են խնդիրներ լինել այն համայնքներում, որտեղ տեղադրված չեն ջրի հաշվիչներ և ավելին՝ ջրի վարձավճար չի գանձվում: Հետագա ծրագրերում անհրաժեշտ է համայնքների վրա պարտավորություն դնել ջրի հաշվիչների տեղադրման և վարձավճարների գանձման հարցում: Խմելու ջրամատակարարման ցանցը Հայջրմուղին հանձնելու դեպքում դրա շահագործման և պահպանման ռիսկերը կրճատվում են:
- Ոռոգման համակարգերը, որպես կանոն շահագործման են տրվում Ջրօգտագործողների միությանը, որոնք հավաքում են ոռոգման ջրի վարձավճարներ և ի վիճակի են իրականացնել պահպանման ծախսերը:
- Դրենաժային համակարգերի կայունության մասին արդեն վերևում ասվել է, դրանք անհրաժեշտ է 3-4 տարին մեկ անգամ պարբերաբար կրկնել, որի համար համայնքները չունեն անհրաժեշտ միջոցներ և չգիտեն էլ թե որտեղից կարող են այդ միջոցները հայթայթել:
- Ծրագրով վերանորոգված 2 ներհամայնքային ճանապարհները պահպանվում են համայնքների կողմից, որոնց բյուջեներում համապատասխան ծախսեր նախատեսված են:

Գնահատման ամփոփում

92. ՇՀՖԾ «Գյուղական ենթակառուցվածքներ» բաղադրիչի իրականացումը ԳԶՄՀ Սոնիտորինգի և գնահատման ուղեցույցով սահմանված 6 բալանի համակարգով¹¹ գնահատվում է **Չափավոր Բավարար (4)**:

Ըստ գնահատման չափանիշների, «Գյուղական ենթակառուցվածքներ» բաղադրիչի գնահատումը բերված է Աղյուսակ 12-ում:

Աղյուսակ 12. «Գյուղական ենթակառուցվածքներ» բաղադրիչի գնահատումը

Չափանիշի անվանումը	Ռեյտինգը
Ծրագրի իրականացում	
Ակտուալությունը	5
Էֆեկտիվությունը	4
Արդյունավետությունը	4
Ծրագրի իրականացման գնահատականը	4.3
Ազդեցությունը գյուղական աղքատության վրա	
Ազդեցությունը գյուղական աղքատության վրա	4
Գնահատման այլ չափանիշներ	
Կայունությունը	4
Սեռերի հավասարություն և կանանց իրավունքների ընդլայնում	5
Ընհանուր գնահատում	4
Գործընկերների գնահատում	
ԳԶՄՀ	6
ՀՀ կառավարություն	5
Ֆինանսական ինստիտուտներ	5
Ամփոփ ռեյտինգ	5

¹¹ -1=խիստ անբավարար, 2=անբավարար, 3=չափավոր անբավարար, 4=չափավոր բավարար, 5=բավարար, 6=խիստ բավարար

Առաջարկություններ

1. Համայնքային ծրագրերի և մասնավորապես ենթակառուցվածքային ծրագրերի իրականացմանը պետք է նախորդի համայնքի կարիքների բացահայտման և համայնքի զարգացման առաջնահերթությունների սահմանման աշխատանքների իրականացումը: Գազի գծերին միացումների և ցածր մակարդակը ոռոգման տարածքների պլանավորված մակարդակի չհասնելը խոսում է այն մասին, որ գազի ֆիկացիան, իսկ առանձին դեպքերում (Ոսկեպար՝ Տավուշի մարզ) նաև ոռոգումը չի հանդիսացել համայնքի առաջնահերթությունը:
2. Ինչպես պարզվեց հետազոտության արդյունքներից, գազի գծին չմիանալու հիմնական պատճառներից է միացման բարձր ծախսերը և այդ ծախսերը միանվագ կատարելու հանգամանքը: Գազի ֆիկացիայի ոլորտում ստեղծված իրավիճակից դուրս գալու համար կարելի է բանակցել Հայռուսգազարդի հետ, որ վերջինս իր վրա վերցնի գազի գծին միանալու տնային տնտեսության ծախսերը, իսկ կատարված ծախսերը տնային տնտեսությունից մաս-մաս ետ ստանա ամռան ամիսների ընթացքում: Որպես այլընտրանքային լուծում կարող է լինել ՇՀՖԾ գազի ֆիկացիայի շահառու համայնքների տնտեսություններին, գազի գծին միանալու համար, ԳՖԿ միջոցներից, ցածր տոկոսադրույքով սպառողական վարկերի տրամադրումը:
3. Հաշվի առնելով դրենաժային ծրագրերի արդյունավետության բարձր մակարդակը, առաջարկվում է ԳՁՄՀ հաջորդ ծրագրերում նույնպես միջոցներ նախատեսել այս ենթակառուցվածքների բարելավման համար: Միաժամանակ, աշխատանքներ տանել դրենաժային ծրագրերն ավելի հիմնովին իրականացնելու համար նոր լուծումների բացահայտման ուղղությամբ:
4. Ենթակառուցվածքի բարելավումն, անհրաժեշտության դեպքում իրականացնել ամբողջ համակարգի համար, չկատարել ենթակառուցվածքի համակարգի մի մասի բարելավումներ, եթե բարելավման կարիք ունի ողջ համակարգը: Օրինակ, չվերանորոգել ոռոգման և խմելու ջրամատակարարման մայր ջրատարները, եթե դրանց ներքին ցանցերը վատ վիճակում են կամ հակառակը: Կամ մայր ջրատարների նախագծումը ուղեկցել ներքին ցանցերի պիտանիության մակարդակի գնահատմամբ:
5. Խմելու ջրամատակարարման ծրագրերի իրականացման դեպքում, պայմանագրային հիմունքներով համայնքների վրա դնել ջրի հաշվիչների տեղադրման և ջրի վճարների գանձման պարտականությունները: Ջրամատակարարման ծրագրերի կայունության մակարդակի ավելացման տեսանկյունից ջրի վճարի գանձումը խիստ կարևոր է:
6. Հանրապետության գյուղատնտեսության ոլորտում տնտեսավարող սուբյեկտների առաջնային խնդիրն այսօրվա դրությամբ, արտադրված գյուղատնտեսական մթերքների և արտադրանքի իրացման խնդիրն է: ԳՁՄՀ հետագա ծրագրերի հիմնական ուղղություններից մեկը պետք է լինի արտահանման ներուժ ունեցող գյուղատնտեսական ու վերամշակող արտադրությունների խթանումն ու արտահանման գործընթացի կազմակերպմանն աջակցությունը:
7. Ծրագրերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության ապահովման և գնահատման արդյունավետության բարձրացման տեսանկյունից, հետագա ծրագրերում ներառել գնահատման հետազոտությունների՝ հիմնարար (Baseline), կրկնակի (Repeat) և եզրափակիչ (Complete) անցկացումը:

Հավելվածներ¹²

Հավելված 1

Աղքատության հիմնական ցուցանիշները ըստ մարզերի:

(տոկոսներով)

	2008		2012			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ն աղքատների մեջ	%-ն ընդհանուր առկա բնակչության մեջ
ք.Երևան	1.1	20.1	2.2	25.6	26.8	33.9
Արագածոտն	0.5	20.3	0.9	21.2	2.2	3.4
Արարատ	1.6	31.3	2.1	34.6	8.8	8.2
Արմավիր	0.7	24.5	3.4	34.3	9.4	8.9
Գեղարքունիք	0.4	32	1.4	35.5	7.8	7.1
Լոռի	2.8	34.2	3.4	38.7	11.6	9.7
Կոտայք	2.1	39.5	5.7	42.5	13.1	10.0
Շիրակ	4.6	42.4	5.5	46.0	12.2	8.5
Սյունիք	1.3	20.3	0.7	25.6	3.2	4.1
Վայոց Ձոր	1.9	21.1	0.5	20.7	1.2	1.8
Տավուշ	1.7	23.2	1.9	27.5	3.7	4.4
Ընդամենը	1.6	27.6	2.8	32.4	100	100

Աղբյուր. ՀՀ ԱԿԾ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2013թ.

¹² - 4-9 հավելվածները բերված են կից ներկայացվող Excel ֆայլում

Գյուղական ենթակառուցվածքներ բաղադրիչի ազդեցության գնահատման համար
ընտրված համայնքները

		Ենթակառուցվածքներ			
	Մարզ	Գագ	Ոռոգում	Խմելու ջրամատակարարում	Ճանապարհ
1	Արագածոտն	Օհանավան			
2	Արարատ	Ավշար Սիփանիկ	Բերդիկ	Ոսկետափ	
3	Արմավիր		Արմավիր	Այգեշատ	
4	Գեղարքունիք	Ճամբարակ		Վարդենիկ	Ճամբարակ
5	Լոռի	Մեծ Այրում		Կաճաճկուտ	
6	Կոտայք				
7	Շիրակ	Իսահակյան		Պեմզաշեն	
8	Վայոց Ձոր		Գոմք Ագատեկ		
	Ընդամենը	6	4	5	1

Տեխնիկական առաջադրանքը և ծառայությունների շրջանակը Շուկայավարման հնարավորությունն էրմերներին ծրագրի ենթակառուցվածքներ բաղադրիչի ազդեցության գնահատման համար

ԾՐԱԳԻՐ

«Շուկայավարման հնարավորությունն էրմերներին» (ՇՀՖԾ) ծրագիրն իրենից ներկայացնում է ԳԶՄՀ-ի, ՕՍԶՀ-ի, Դանիայի կառավարության, Հայաստանի Հանրապետության կառավարության, ֆինանսական հաստատությունների և ծրագրի հաճախորդների կողմից ֆինանսավորվող ավելի քան 36 մլն ԱՄՆ դոլարի ներդրում: Այն նպատակ ունի բարելավել Հայաստանի աղքատ գյուղական բնակչության տնտեսական և սոցիալական վիճակը: Ծրագիրը մեկնարկել է 2008 թ. մայիսին, ավարտը նախատեսվում է 2013 թ. հունիսին: Այն հանդիսանում է ԳԶՄՀ-ի կողմից ֆինանսավորվող հինգերորդ ծրագիրը Հայաստանում, և առաջինն է գյուղական աղքատության կրճատմանն աջակցող արժեթղթերի ֆոնդի ստեղծման հարցում, ինչը նորարարական է ինչպես Հայաստանի, այնպես էլ IFAD-ի համար: Ծրագիրը մասնակից ֆինանսական հաստատություններին ապահովում վերաֆինանսավորման կապիտալով՝ գյուղական վարկեր տրամադրելու նպատակով, և աջակցում է գյուղական ենթակառուցվածքների շինարարությունը:

ԳԶՄՀ և ՕՍԶՀ ներդրումը սոցիալական ենթակառուցվածքների մասով կազմում է 2.1 մլն և 13.5 մլն ԱՄՆ դոլար համապատասխանաբար, որը ամբողջովին տեղաբաշխվել է 2011թ-ի վերջի դրությամբ: ԳԶՄՀ-ն ներգրավված չի եղել ՕՍԶՀ ֆինանսավորման վերահսկողության և կառավարման գործընթացում: Այդ միջոցները ուղղակիորեն կառավարվել են ՕՍԶՀ-ի կողմից կառավարության հետ համաձայնությամբ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Հաշվի առնելով ծրագրի փակումը և ՇՀՖԾ ծրագրի նվաճումների ընդհանուր գնահատումը Ծրագրի ավարտական զեկույցում (ԾԱԶ) մինչև 2013 թ. վերջը՝ անհրաժեշտ է կատարել ՇՀՖԾ գործունեության ազդեցության վերաբերյալ տվյալների հավաքագրում:

Ելակետային վիճակի ուսումնասիրության բացակայության պայմաններում դա անհրաժեշտ է կատարել հետահայաց հիմունքներով: Թեև ՇՀՖԾ ՄնԳ գործառույթի ամբողջ պատասխանատվությունը կրում է ՕԻԳ-ի ՄնԳ բաժինը, կայացվել է որոշում՝ աշխատանքի ընդունել ՄնԳ կարճաժամկետ խորհրդատու, ով կիրականացնի ենթակառուցվածքների մասով ազդեցության դաշտային հետազոտություն և հավաքագրված տվյալների մշակման արդյունքում կկազմի վերջնական ԾԱԶ:

Վերջերս (2013 թ. մայիս-հունիս ամիսներին) ԳԶՄՀ-ն կազմակերպել էր FMAP-ին Տեխնիկական աջակցության առաքելություն: Սույն Առաջադրանքի պայմանների Հավելված 1-ում (Աշխատանքային փաստաթուղթ II, ՇՀՖԾ ենթակառուցվածքներ ծրագրի ազդեցության գնահատում) տրված են ընդհանուր ցուցումներ, թե ինչպես իրականացնել ազդեցության դաշտային հետազոտությունը: Խորհրդատուն ազդեցության դաշտային հետազոտությունը իրականացնելիս պետք է հիմք ընդունի վերոնշյալ զեկույցը, որտեղ ԾԱԶ-ին, ինչպես նաև հետազոտական գործունեությանը վերաբերող բոլոր պահանջները մանրամասնորեն շարադրված են (Տես կից Հավելված 1, Աշխատանքային փաստաթուղթ II):

Խորհրդատուն պետք է առաջին հերթին ավարտի տվյալների հավաքագրումը՝ թարմացնելով գյուղական ներդրումների առկա տվյալների բազան (զեկույցել ենթակառուցվածքային ներդրումների մասով շահառուների քանակի, աշխարհագրական բաշխման, ինչպես նաև ֆիզիկական առանձնահատկությունների վերաբերյալ), և երկրորդ՝ իրականացնի

ենթակառուցվածքային ներդրումների ազդեցության վերլուծություն համապատասխան ոլորտներում ինչպիսիք են՝ ակտիվներ, եկամուտներ, բնապահպանական ռեսուրսներ: ԾԱԶ-ը պետք է նաև ներառի արդյունավետության և էֆեկտիվության գնահատում, որը պետք է հիմնվի արդյունքի, ազդեցության և որակական տվյալների, ինչպես նաև ԾԻԳ-ի ֆինանսական և այլ բաժինների կողմից տրամադրված տեղեկատվության համատեղ վերլուծության վրա:

ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ

Աշխատելով ՇՀՏԾ-ի ՄևԳ բաժնի ուղեցույցի համաձայն և ստանալով ԾԻԳ-ի աշխատակիցների աջակցությունը՝ խորհրդատուն պատասխանատու է ենթակառուցվածքների ազդեցության հետազոտության հաջող անցկացման համար: Այս ընդհանուր առաջադրանքի շրջանակներում նրա հիմնական խնդիրներն են.

- Ծանոթանալ մոտեցումների և մոդելների հետ, որոնք օգտագործվելու են վերջնական ԾԱԶ-ի պատրաստման ընթացքում,
- ԾԱԶ-ի պահանջների հիման վրա պատրաստել Ենթակառուցվածքների ազդեցության հետազոտության մանրամասն պլան, այդ թվում՝ ուսումնասիրության նյութերի մշակման պլան,
- Որոշում կայացնել համապատասխան ենթաօլորտների վերաբերյալ, որոնք պետք է ընդգրկվեն հետազոտության մեջ,
- Մշակել համապատասխան դաշտային հարցաշար յուրաքանչյուր ընտրված ենթաօլորտի համար,
- Ընտրել անձանց և ընկերություններին, որոնք պետք է ընդգրկվեն ընտրանքային հետազոտությունում,
- Մշակել արդյունավետ ծրագիր, թե ինչպես պետք է կազմակերպել դաշտային տվյալների հավաքագրումը գործնականում,
- ԾԻԳ-ի աջակցությամբ իրականացնել տվյալների դաշտային հավաքագրում ծրագրի շահառուներից,
- Մշակել հավաքագրված դաշտային տվյալներն այնպիսի աղյուսակների և ձևաչափերի տեսքով, որոնք կարող են օգտագործվել ԾԱԶ-ի մոդելներում:
- Պատրաստել համառոտ հաշվետվություն Ենթակառուցվածքների ազդեցության հետազոտության հիմնական արդյունքների հիման վրա՝ ներառելով առանցքային եզրակացությունները և առաջարկությունները այն մասին թե ինչպես պետք է բարելավել ազդեցությունը ապագայում:

Ենթակառուցվածքների ազդեցության զեկույցի հիմնական կետերը, որի շուրջ խորհրդատուն պետք է կենտրոնանա՝ մոդելների ստեղծումն ու արդյունավետության և էֆեկտիվության գնահատումն է: Ավելի կոնկրետ խորհրդատուն պետք է.

- Հիմնական մշակաբույսերի համար կատարված հաշվարկներով գնահատել ՖՇՀԾ-ի շրջանակներում ֆինանսավորված առնվազն 4 ոռոգման համակարգերի շնորհիվ հավելյալ եկամտի ընթացիկ և հետագա 20 տարիների կանխատեսումները: Այդ 4 ենթածրագրերը պետք է ընտրել այնպես, որ հնարավոր լինի գնահատման արդյունքները տարածել ՖՇՀԾ-ի ներքո ոռոգման համակարգերում կատարված բոլոր ներդրումների վրա/ օրինակ՝ դրանք կարող են ընտրվել ըստ աղբյուրի տեսակի կամ աշխարհագրական տեղակայման/
- Գնահատել առնվազն 3 ջրամատակարարման ծրագրերի ներքո ժամանակի խնայողության դրամական արտահայտությունը և բարելավված անասնապահությունից առաջացած հավելյալ եկամտի ընթացիկ և 20 տարվա կանխատեսումները: Այդ 3 ենթածրագրերը պետք է ընտրել այնպես, որ հնարավոր լինի գնահատման արդյունքները տարածել ՇՀՏԾ-ի ներքո ջրամատակարարման համակարգերում կատարված բոլոր ներդրումների վրա/ օրինակ՝ դրանք կարող են ընտրվել ըստ աշխարհագրական տեղակայման/:

- Հիմնավորել եկամտի հոսքերի հաշվարկների համար օգտագործված ենթադրությունները՝ հիմք ընդունելով ԾԻԳ-ի տվյալները կամ անհրաժեշտության դեպքում հավաքել լրացուցիչ տեղեկատվություն
- Վերլուծել գազաֆիկացման համակարգերին միացված տնտեսությունների գազի սպառման վերաբերյալ ԾԻԳ-ի տվյալները՝ ստեղծելով 2 մոդել (մեկը այն համայնքների համար, որոնք վառելափայտի խնդիր չունեն, իսկ մյուսը՝ վառելափայտի խնդիր ունեցող համայնքների համար): Պետք է վերլուծել Ծրագրից առաջ և հետո՝ վառելանյութի սպառման միջին զամբյուղը (նաև ներառված հեղուկ գազը, էլեկտրաէներգիան, վառելափայտը և աթարը) և ընդհանուր արժեքի, և մատակարարված գուտ էներգիայի տեսանկյունից:
- Ստեղծել ֆինանսական վերլուծության մոդելներ (ներառյալ ՋՆԱ/NPV և ՆՆՀ/IRR հաշվարկը) հիմք ընդունելով ենթակառուցվածքների համար կատարված դրամական հոսքերի հաշվարկները: Ըստ այդմ, ռոռզման և ջրամատակարարման համակարգերի գնահատումներից կատարված եզրակացությունները հնարավորություն կտան հաշվարկել. i) անմիջական շահառուների ֆինանսական օգուտը (IRR); ii) Կառավարության համար տնտեսական օգուտը, որն առաջանում է բարելավված տնտեսական գործունեություն արդյունքում ծագած հավելյալ ուղիղ և անուղղակի հարկերից (ավելացած գնումներ, սպառումներ և այլն), ինչպես նաև ԳԶՄՀ-ի ներդրումից առաջացած օգուտը՝ ԳԶՄՀ-ի վարկի ծախսերի համեմատ iii) տնտեսական ազդեցությունը գյուղական տարածքներում՝ կապված տարածաշրջանում ներդրման արդյունքում առաջացած ակտիվ տնտեսական գործունեությամբ; iv) անմիջական շահառուների ակտիվների ավելացումը; v) ուղղակի, անուղղակի և <<հարկադրական>> տնտեսական գործունեության արդյունքում ստեղծված գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական աշխատատանքային հնարավորությունները
- Աջակցել ԾԻԳ-ի մոնիտորինգի մասնագետին համակցված վերլուծելու ՇՀՖՕ-ի ենթակառուցվածքների պորտֆելի ֆինանսական և արդյունավետության/ outreach/ տվյալները՝ եզրակացություններ կատարելով ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման վրա (օրինակ ծախս/շահառու; նախագծման ծախսը վերահսկման ծախսի և շինարարության ծախսի համեմատ,, 1 ԱՄՆԴ-ի դիմաց կատարված ծախսը, հավելյալ եկամուտ և այլն)
- Աջակցել ԾԻԳ-ի մոնիտորինգի մասնագետին՝ վերլուծելու ՇՀՖՕ-ի ենթակառուցվածքների պորտֆելի արդյունավետության/ outreach/ տվյալները՝ եզրակացություններ կատարելով աղքատներին օժանդակելու հարցում նման ներդրումների արդյունավետության վերաբերյալ: Գնահատումը պետք է հիմնված լինի ըստ աղքատության տեղաբաշխման (ըստ մարզի, բարձրությամբ, սահամամերձությամբ և այլն).

Որակավորում

Դիմորդը պետք է ունենա հետևյալ որակավորումը.

- բարձրագույն կրթություն տնտեսագիտության, հասարակագիտության կամ հարակից այլ ոլորտում
- առնվազն 10 տարվա փորձ ՄԵԳ հետ կապված գործառնություններում, ներառյալ՝ ազդեցության գնահատման ուսումնասիրությունների ինքնուրույն կատարման զգալի փորձ
- զգալի փորձ տվյալների մշակման և վերլուծության ոլորտում
- Գյուղական տնտեսության լավ իմացություն
- Հայերենի և անգլերենի գրավոր և բանավոր խոսքի գերազանց իմացություն: